ՀԱՄԱՏԵՂ ծրագիր

ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից «Տեղական ինքնակառավարման մասին» եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքներով սահմանված թափանցիկության, հանրային հաշվետվողականության եւ մասնակցության ապահովման պարտավորությունների կատարման մոնիտորինգի

ԶԵԿՈՒՅՑ

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ
հասարակական կազմակերպություն
Դեկտեմբեր - 2016

ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքներով սահմանված թափանցիկության, հանրային հաշվետվողականության եւ մասնակցության ապահովման պարտավորությունների կատարման մոնիտորինգի

2016 թ. տարեկան զեկույցի բովանդակությունը

Համատեղ ծրագրի մասին էջ՝ 3
Դիտարկման (մոնիտորինգի) խնդիրները էջ՝ 4

Բաժին 1.
Առաջին փուլ էջ՝ 5
Իրավական կարգավորումը էջ՝ 8
Հարցումների պատասխաններ եւ արձագանքներ էջ՝ 9
Միջանկյալ զեկույցի ներկայացում մարզերում էջ՝ 11
Երկրորդ փուլ էջ՝ 13

Պատասխանների որակական եւ քանակական ցուցանիշները էջ՝ 16
Պատասխանների ժամկետային ցուցանիշները էջ՝ 21

Բաժին 2. Տեղեկությունների պրոակտիվ տարածումը էջ՝ 25
Բաժին 3. Հանրային մասնակցության գործիքների առկայությունը
Հանրային մասնակցության ապահովման կարգերի առկայությունը էջ՝ 32
Խորհրդակցական մարմինների առկայությունը էջ՝ 37
Հանրային լսումների կազմակերպումը էջ՝ 42

2016 թ. տարեկան զեկույցի ներկայացում մարզերում էջ՝ 48
Զեկույցի արձագանքներ եւ լրացումներ մարզպետարաններից էջ՝ 48
Իրադրության բարեփոխման առաջարկությունները էջ՝ 49
Հետագա աշխատանքների մասին էջ՝ 51
Հավելվածներ
Հավելված 1. համայնքապետերին հղված տեղեկության հարցման օրինակ էջ՝ 55
Հավելված 2. «տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք էջ՝ 58
Հավելված 3. Պաշտոնյաների անվանացանկ էջ՝ 63
Հավելված 4. Լոռու մարզպետարանից ստացված ցուցակ էջ՝ 64
Հավելված 5. Վայոց Ձորի մարզպետարանից ստացված ցուցակ էջ՝ 65

«Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը»՝
ՀաՄաՏեղ ծրագիր

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ

ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով եւ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով սահմանված թափանցիկության, հանրային հաշվետվողականության եւ մասնակցության ապահովման պարտավորությունների կատարման մոնիտորինգի

ԶԵԿՈՒՅՑ

ՀաՄաՏեղ ծրագրի մասին

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային աջակցությամբ իրականացվող «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (**ՀաՄաՏեղ**) ծրագրի շրջանակներում 2016-2019 թվականներին իրականացնում է ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մի քանի օրենքներով նախատեսված պարտադիր գործառույթների դիտարկում-հսկողություն, իսկ արդյունքների մասին պարբերաբար իրազեկում է հանրությանը եւ ուսումնասիրվող համայնքներին՝ մարզային համաժողովների ձեւաչափով եւ անվանական նամակագրությամբ:

ՀաՄաՏեղ ծրագիրն իրականացվում է համընկերության կողմից, որի կազմում են Համայնքների ֆինանսիստների միավորումը (ՀՖՄ), Տեղեկատվական համակարգերի զարգացման եւ վերապատրաստման կենտրոնը (ՏՀԶԿԿ), Երեւանի մամուլի ակումբը (ԵՄԱ), Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը (ԺԱԱ), Եվրասիա համագործակցություն հիմնադրամը (ԵՀՀ), Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնը (ՀՌԿԿ): Ծրագրի նպատակն է բարձրացնել հանրային մասնակցության աստիճանը ապակենտրոնացման եւ տեղական ինքնակառավարման բարեփոխումներում: Ծրագիրը քաղաքացիներին տրամադրում է վստահելի տեղեկատվություն եւ հզորացնում քաղաքացիական հասարակությանը՝ արդյունավետ, հաշվետու եւ մասնակցային տեղական ինքնակառավարումը խթանելու նպատակով:

Ծրագրի ժամկետները. 2014-2019 թվականներ:
Դիտարկման մասին

Դիտարկման (մոնիտորինգի) հիմնական խնդիրները հետեւյալն են.

1. **ՏԻՄ կողմից ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի[1] 9-րդ հոդվածով նախատեսված՝ անձանց տեղեկությունների հարցումներին օրենքին համաձայն պատասխանելու պրակտիկան. արդյո՞ք օրենքով սահմանված ժամկետներում եւ կարգով են տեղական ինքնակառավարման մարմինները պատասխանում անձանց տեղեկության հարցումներին:**
2. **ՏԻՄ կողմից ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 7-րդ հոդվածի երրորդ մասով նախատեսված տեղեկությունների պաշարի պրոակտիվ տրամադրումը հանրությանը. Ինչպե՞ս, ի՞նչ ծավալով է դա արվում:** (ՏԻՄ-երի կողմից հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) ծրագրերի, աշխատանքների եւ ծառայությունների մասին, այդ թվում նաեւ համայնքի զարգացման քառամյա ծրագրի մասին, համայնքի բյուջեի մասին, ՏԻՄ-երին հղվելիք գրավոր հարցումների ձեւերը եւ դրանք լրացնելու վերաբերյալ խորհրդատվական ցուցումները, համայնքի պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները, համայնքի աշխատակազմում աշխատանքի ընդունման կարգը եւ թափուր աշխատատեղերը, շրջակա միջավայրի վրա համայնքապետարանի ներգործությունը, համայնքում հասարակական միջոցառումների ծրագրերը, համայնքի ղեկավարի եւ ավագանու անդամների մոտ քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը եւ վայրը, եւ այլն):
3. **ՏԻՄ կողմից ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով[2] սահմանված՝ թափանցիկության, հաշվետվողականության եւ հանրային մասնակցության պարտավորությունների կատարման ծավալը եւ որակը** (Ավագանու նստավայրի գոյություն, ավագանու նիստերի մասին նախնական իրազեկում հանրությանը, ավագանու նիստերի բաց եւ մատչելի լինելու հանգամանքը, հանրային լսումների անցկացման կարգի գոյությունը եւ պրակտիկան, համայնքապետին կից խորհրդակցական մարմնի ստեղծման կարգը եւ պրակտիկան, հանրագրի իրականացման ձեւերը եւ այլն):

Դիտարկման ածանցյալ խնդիրը հետեւյալն է

4. **Համայնքապետերից ստանալ օրենքով սահմանված գաղտնիք չհանդիսացող տեղեկություններ, դրանք համակարգել, հրապարակել www.publicdata.am կայքում եւ մասնակիորեն ենթարկել համեմատական վերլուծության** (համայնքների բյուջեները, հաստիքացուցակները, համայնքի ղեկավարի ընդունած որոշումները, համայնքապատկան հիմնարկների մասին տեղեկությունները, համայնքի բնակիչներին մատուցվող ծառայությունների ցանկը, վճարների չափերը, սակագները եւ այլն):

Կատարված աշխատանքի մասին ըստ խնդիրների

[1] «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք՝ http://parliament.am/legislation.php?sel=show&ID=1390&lang=arm
[2] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք՝ http://parliament.am/legislation.php?sel=show&ID=1305&lang=arm

Բաժին 1.

ՏԻՄ կողմից ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի[3] 9-րդ հոդվածով նախատեսված՝ անձանց տեղեկությունների հարցումներին օրենքին համաձայն պատասխանելու պրակտիկան. արդյո՞ք օրենքով սահմանված ժամկետներում եւ կարգով են տեղական ինքնակառավարման մարմինները պատասխանում անձանց տեղեկության հարցումներին:

Այս մոնիտորինգը պլանավորվել էր իրականացնել երկու փուլով:

Առաջին փուլում նախատեսվել էր իրականացնել տեղեկությունների հարցումների հողում ՀՀ բոլոր համայնքապետերին, տեղեկությունների ստացում, համակարգում եւ ուսումնասիրություն, որին պիտի հետեւեին միջանկյալ զեկույցի կազմումը, քննարկումները բոլոր մարզային կենտրոններում եւ Երեւանում, ապա միջանկյալ զեկույցի հրապարակումը: Առաջին փուլի ժամկետներն էին 2015 թ. հոկտեմբերի 1-ից հունիսի 30-ը:

Ծրագրի **երկրորդ փուլում** նախատեսվել էր լրացնել առաջին փուլում ստացված տեղեկությունները, անհրաժեշտության դեպքում լրացուցիչ հարցումներ հղել համայնքապետերին, նրանցից ստանալ պատասխանները, ավելացնել առաջին փուլում ստացված տեղեկություններին, լրացուցիչ համադրում եւ վերլուծություն իրականացնել, կազմել համայնքների թափանցիկության, հաշվետվողականության եւ հանրային մասնակցության պարտավորությունների կատարման մասին տարեկան զեկույց, այն ներկայացնել մարզկենտրոններում, քննարկել համայնքապետերի եւ շահագրգիռ քաղաքացիական հասարակության հետ, ապա հրապարակել: Երկրորդ փուլի ժամկետներն էին 2015 թ. հուլիսի 1-ից սեպտեմբերի 30-ը:

Մոնիտորինգի առաջին փուլ

Ծրագրի առաջին փուլում Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը մարզ առ մարզ տեղեկության համանման մեկական հարցում է հղել ՀՀ բոլոր համայնքապետերին, խնդրելով ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքին համապատասխան կարգով տրամադրել համայնքների ղեկավարների մոտ տնօրինվող մի շարք տեղեկություններ, որոնք վերաբերվում են ՏԻՄ գործառույթներին եւ որեւէ օրենքով սահմանված գաղտնիք չեն պարունակում: Այդ հարցմամբ խնդրվել է տրամադրել այնպիսի տեղեկություններ (կամ՝ հրապարակված լինելու դեպքում՝ նշել աղբյուրը), ինչպես օրինակ. համայնքի ավագանու 2014 եւ 2015 թվականների բոլոր որոշումները, համայնքի զարգացման քառամյա ծրագիրը (վերջինը, հաստատված համայնքի ավագանու կողմից), համայնքի 2014 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը, համայնքի 2015 թվականի ճշտված բյուջեն, 2014 եւ 2015 թվականների համայնքի ղեկավարի բոլոր որոշումները, համայնքի աշխատակազմի 2015 թվականի հաստատված հաստիքացուցակը, համայնքի ավագանու կողմից ընդունված՝ տեղական

[3] «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք՝ http://parliament.am/legislation.php?sel=show&ID=1390&lang=arm

ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության վերաբերյալ օրենքով սահմանված թվով երեք կարգերը եւ այլն: Հարցման նմուշը ներկայացված է այս զեկույցի վերջում, **թիվ 1 հավելվածում**:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով էլեկտրոնային հարցումները չեն կարգավորվում, այս մոնիտորինգի շրջանակներում տեղեկության հարցումները համայնքապետերին հղվել են թղթե նամակով եւ ծրարով, դրանք ուղարկվել են փոստատնից՝ ստացման մասին ծանուցագրով: Համայնքապետը կամ նրա ներկայացուցիչը հարցումը ստանալիս ստորագրել է ծանուցագրում, որը վերադարձել է ԺԱԱ, որպես ապացույց այն բանի, որ հարցումը պատշաճ կերպով հասել է հասցեատիրոջը:

Այս դիտարկման մեկնարկը համընկել է 2015-2016 թթ. ընթացքում Սյունիքի մարզի Տաթեւ, Տավուշի մարզի Դիլիջան եւ Լոռու մարզի Թումանյան փնջերի համայնքների խոշորացման գործընթացի հետ (խոշորացման առաջին փուլ), իսկ ավելի ուշ՝ եւս 13 համայնքային փնջերում համայնքների խոշորացման հետ (խոշորացման երկրորդ փուլ), եւ հաշվի առնելով, որ մոնիտորինգի մեկնարկին համայնքները դեռ խոշորացված չեն եղել եւ մի շարք համայնքների ՏԻՄ-երի լիազորությունները դեռ դադարեցված չեն եղել, հարցումները հղվել են բոլոր 915 համայնքների ղեկավարներին: Միջանկյալ եւ այս տարեկան զեկույցում ամփոփվել են համայնքապետերից ստացված պատասխանները, առանց հաշվի առնելու լուծարված համայնքների նախկին իշխանությունների արձագանքները: Վերլուծությունը հենվում է խոշորացման առաջին փուլից հետո մնացած 896 համայնքապետարաններին հղված հարցումների եւ դրանց արձագանքների վրա:

Հարցումները հղվել են ԺԱԱ տիտղոսաթղթով, այս ծրագրի իրավախորհրդատու Արինա Մեծոյանի անունից: Հարցման նախաբանում համայնքապետերին բացատրվել եւ մեկնաբանվել է հարցման նպատակը, եւ՝ թե ինչպես են օգտագործվելու ստացվելիք տեղեկությունները: Հատուկ նշվել է, որ, եթե հարցվող տեղեկությունները կամ դրանց մի մասը որեւէ տեղում համայնքապետն արդեն հրապարակել է, խնդրվում է այդ տեղեկությունները տրամադրելու փոխարեն ակումբին տրամադրել հրապարակման աղբյուրը՝ լիարժեք հղմամբ: Խնդրվել է, հնարավորության դեպքում, տեղեկությունները տրամադրել էլեկտրոնային տարբերակով՝ այն ուղարկելով իրավախորհրդատուի էլեկտրոնային հասցեով:

Հարցումները հղվել են հետեւյալ ժամանակացույցով եւ քանակությամբ.

Աղյուսակ՝ 1

	Մարզեր եւ մայրաքաղաք	Հարցումների թիվը (փակագծերում՝ խոշորացումից հետո համայնք-ների թիվն է)	Հարցումն ուղարկելու ամսաթիվը	Պատշաճ ստացված հարցում-ների թիվը	Համայնքապետերի կողմից չստացված եւ վերադարձած հարցումների թիվը
1	Արագածոտն	114	18.02.2016-19.02.2016	112	2
2	Արարատ	97	12.01.2016-16.01.2016	97	0
3	Արմավիր	97	30.12.2015-13.01-2016	97	0
4	Գեղարքունիք	92	18.02.2016-23.02.2016	92	0
5	Լոռի	113 (107)	21.03.2016-23.03.2016	112	1
6	Կոտայք	67	08.02.2016-09.02.2016	67	0
7	Շիրակ	119	21.03.2016-24.03.2016	116	3
8	Սյունիք	109 (102)	13.01.2016-18.01.2016	108	1
9	Վայոց Ձոր	44	14.01.2016-16.01.2016	44	0
10	Տավուշ	62 (56)	22.03.2016	62	0
11	Երեւան	1	21.03.2016	1	0
	Ընդամենը	915 (896)		908	7

Վերադարձած նամակներից պարզվել է, որ Արագածոտնի Հացաշեն համայնքի եւ Շիրակի Սպանդարյան համայնքի համայնքապետերը մահացած են, սակայն մարզպետարանների կայքերում դեռեւս նրանց անուններն են առկա: Նոր համայնքապետերի անուններով նոր հարցումներ են հղվել 2016 թվականի ապրիլ ամսին:

5 համայնքներից 4-ի նամակների վրա հայփոստը մակագրել է, որ հասցեները սխալ են կամ թերի, ինչը անհասկանալի է, որովհետեւ դրանք եղել են մարզի եւ գյուղի անվանումներով հասցեներ. Շիրակի մարզի Կարմրաքար եւ Գուսանագյուղ, Արագածոտնի մարզի Բերքառատ համայնքներ: Հայփոստի եւ համայնքապետերի հետ բանակցություններից հետո այս համայնքների ղեկավարներին հղվել են նոր հարցումներ 2016 թվականի ապրիլ ամսին: Սյունիքի Կարճեւան համայնքից «թերի հասցե» մակագրմամբ նամակը վերադարձել է, երկրորդ անգամ հարցում է հղվել 2016 թ. փետրվարի 18-ին, որը համայնքապետարանում ստացել են 2016 թ. փետրվարի 25-ին:

Լոռու մարզի Անտառամուտի համայնքապետարանից նամակը վերադարձել է Հայփոստի «Անտառամուտում համայնքի ղեկավարն է Արայիկ Գեւորգյանը» մակագրությամբ, այնինչ նամակն ուղարկվել էր Լոռու մարզպետարանի կայքում առկա՝ համայնքապետ Մարտուն Համբարձումյանի անուն-ազգանունով:

Աղյուսակ՝ 2

	Համայնքը	Մարզը	Նամակի վերադարձի պատճառը	Նոր հարցում ուղարկելու ամսաթիվը
1	Հացաշեն	Արագածոտն	Մահացած համայնքապետ	29.04.2016
2	Սպանդարյան	Շիրակ	Մահացած համայնքապետ	29.04.2016
3	Կարմրաքար	Շիրակ	Սխալ հասցե՝ ըստ փոստի	29.04.2016
4	Գուսանագյուղ	Շիրակ	Թերի հասցե՝ ըստ փոստի	29.04.2016
5	Բերքառատ	Արագածոտն	Թերի հասցե՝ ըստ փոստի	29.04.2016
6	Կարճեւան	Սյունիք	Թերի հասցե՝ ըստ փոստի	18.02.2016
7	Անտառամուտ	Լոռի	Համայնքի ղեկավարը այլ է՝ ըստ փոստի	29.04.2016

Իրավական կարգավորումը.

Անձանց տեղեկության հարցումներին արձագանքելու «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգը, որով համայնքների ղեկավարները պարտավոր են պատասխանել անձանցից ստացված տեղեկությունների հարցումներին

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն, համայնքապետը տեղեկություն տնօրինող պաշտոնյա է, որը ծանրաբեռնված է անձանց տեղեկությունների հարցումներին պատասխանելու եւ, հնարավորության դեպքում (երբ այդ տեղեկությունները իր մոտ տնօրինվում են եւ օրենքով սահմանված գաղտնիք չեն պարունակում), այդ տեղեկությունները տրամադրելու պարտականությամբ: (Հոդված՝ 3. «… տեղեկատվություն տնօրինող՝ տեղեկություններ ունեցող պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններ, պետական հիմնարկներ, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություններ, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպություններ եւ դրանց պաշտոնատար անձինք…»)

Օրենքի 9-րդ հոդվածը սահմանում է, որ անձանց (օրենքով չի սահմանազատված՝ իրավաբանակա՞ն, թե՞ ֆիզիկական, իսկ սա մեկնաբանվում է որպես իրավունք թե՛ ֆիզիկական, եւ թե՛ իրավաբանական անձանց համար) տեղեկության հարցումներին տեղեկություն տնօրինողները, այս դեպքում՝ **տեղական ինքնակառավարման մարմինների գործադիր ղեկավարը՝ համայնքի ղեկավարը, պարտավոր է պատասխանել գրավոր հարցումը ստանալուց հետո 5-օրյա ժամկետում**, անկախ այն հանգամանքից՝ տնօրինո՞ւմ է հարցվող տեղեկությունը, թե ոչ, եթե, իհարկե, գրավոր հարցումը կազմված է նույն օրենքով սահմանված կարգով: Նույն իններորդ հոդվածը սահմանում է նաեւ, որ, **եթե լրացուցիչ աշխատանք կա կատարելու տեղեկությունը տրամադրման նախապատրաստելու համար, ինչը հնարավոր չէ կատարել հնգօրյա ժամկետում, տեղեկություն տնօրինողը կարող է այն տրամադրել 30-օրյա ժամկետում, բայց պարտավոր է, այդ մասին հարցումն ստանալուց հետո հնգօրյա ժամկետում պատասխանով տեղեկացնել տեղեկություն որոնողին**: ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը տես այս զեկույցին կից 2-րդ հավելվածում (էջ 56):

Համայնքապետերի արձագանքները միջանկյալ զեկույցի կազմման փուլում (մինչեւ 2016 թ. հուլիսի 10-ը)

Ինչպես երեւում է այս զեկույցի առաջին աղյուսակից, Սյունիքի, Վայոց Ձորի, Արարատի եւ Արմավիրի մարզերի համայնքներին հարցումները հղվել են առաջին փուլում՝ 2015թ. դեկտեմբերի 30-ից 2016թ. հունվարի 18-ն ընկած ժամանակահատվածում: Արագածոտնի, Կոտայքի եւ Գեղարքունիքի մարզերի համայնքապետերին հարցումներն հղվել են 2016թ. փետրվարի 8-23-ը: Շիրակի, Լոռու եւ Տավուշի մարզերի համայնքապետերին հարցումներն հղվել են 2016թ. մարտի 21-24-ը, իսկ Երեւանի համայնքապետին հարցումն հղվել է 2016թ. մարտի 21-ին:

Ըստ օրենքի, նաեւ հաշվի առնելով փոստային առաքման տեւողությունը (մինչեւ 5 օր) ՀՀ բոլոր համայնքապետերը պատասխանները պետք է ուղարկեին ԺԱԱ-ին ամենաուշը մինչեւ 2016 թ. ապրիլի 5-ը ներառյալ, իսկ հաշվի առնելով ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով նախատեսված՝ տեղեկությունների տրամադրման լրացուցիչ ժամանակ հատկացնելու նորմը (մինչեւ 30 օր), բոլոր համայնքապետերը այս հարցումներին պետք է պատասխանեին մինչեւ ապրիլի 30-ը: Հաշվի առնելով հարցված տեղեկությունների մեծ ծավալը, հասկանալով, որ անհնար է հնգօրյա ժամկետում պատշաճ պատասխանել այս մոնիտորինգի շրջանակում արվող հարցմանը, եւ լրացուցիչ աշխատանք կատարելու կարիք կա հարցմանը պատասխանելու համար, արդեն հարցման մեջ նշվել էր, որ ակնկալում ենք հարցված տեղեկությունները 30-օրյա ժամկետում եւ՝ կարիք չկա պատասխանելու հարցմանը 5-օրյա ժամկետում: Չնայած օրենքի հստակ պահանջին եւ հարցման մեջ եղած այս պարզաբանմանը, համայնքներից միայն 15,2%-ն է պատասխանել հարցումներին 30-օրյա ժամկետում, 21,3%-ը պատասխանել է ուշացումով, իսկ մնացած 63,5%-ը չի պատասխանել հարցմանը:

Մի քանի համայնքապետարաններից հարցումն ստանալու օրը կամ հաջորդ օրը զանգել են Ակումբ՝ իրավախորհրդատուից պարզել են տեղեկության հարցման հանգամանքները եւ մանրամասները, տեղեկացրել են, որ պատրաստ են պատասխանել եւ տրամադրել հարցված տեղեկությունները (Եղեգնաձոր, Վայք եւ այլն): Մասնավորաբար, եղել են հետեւյալ ուշագրավ արձագանքները.

Արարատի մարզ.

1. 2016 թ. հունվարի 30-ին Արարատի մարզի Արգավանդ համայնքից ստացվել է գրավոր պատասխան, որում ասվում է. «Աշխատանքի ծանրաբեռնվածության պատճառով մենք չենք կարող Ձեզ տեղեկատվություն տրամադրել, ուստի խնդրում ենք Ձեզ հուզող բոլոր հարցերի պատասխանները ստանալ վերոհիշյալ կայքից»: Սակայն նամակում կայքի հասցեն կամ հղումը չեն նշել:
2. Նորաշեն համայնքի ղեկավարը զանգահարել է ակումբ՝ ճշտելու, թե ինչու՞ են հարցում ուղարկել իրենց, չնայած հարցման նախաբանում մի քանի պարբերություններով պատշաճ բացատրվում է հարցման նպատակը: Խոսելով իրավախորհրդատուի հետ, հայտնել է, որ ինքը 10 տարի որպես դատախազ է աշխատել, իրեն դուր չի գալիս, որ հարցում է հղել ակումբը իրեն, տեղեկացրել է, որ, չնայած օրենքով պարտավոր է պատասխանել հարցմանը, ինքը նպատակահարմար չի գտնում պատասխանել հարցմանը, խիստ զայրացած հաղորդել է, որ եթե ինքն էլ Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբով զբաղվի, «…ակումբի համար լավ չի լինի»:
3. Նարեկ համայնքի ղեկավարը պաշտոնապես հայտարարել է՝ իրենից ոչ մեկն իրավունք չունի տեղեկություններ պահանջելու:

4. Այգավան համայնքի ղեկավարը զարմացել է, թե մենք ի՞նչ գործ ունենք այդ տեղեկությունների հետ, որ պահանջում ենք, իրավախորհրդատուի բացատրելուց հետո պատասխանել է, որ կայքի հողում կանի մինչ ապրիլ ամսվա վերջ, պատասխանել է ապրիլի 27-ին հողում կատարելով Արարատի մարզպետարանի կայքի ընդհանրական հասցեին:

Արմավիրի մարզ.

1. Գեղակերտի համայնքապետը 2016 թվականի հունվարի 25-ին պատասխան գրություն է ուղարկել, ըստ որի, ակումբը հարցված տեղեկությունները կարող է ստանալ համապատասխան կայքից, սակայն չի նշել կայքը կամ որեւէ այլ հողում: Կայքի հասցեն ճշտելու եւ այլ հարցերի պատասխանները ստանալու համար ԺԱԱ իրավախորհրդատուն զանգել է համայնքապետին, ով մերժել է տեղեկության հարցմանը պատասխանել, ասելով, որ պարտավոր չեն այդ անել: Երբ մի քանի հեռախոսազրուցների ընթացքում բացատրվել են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի մի շարք դրույթները, համայնքապետը խոստացել է խորհրդակցել իրենց իրավաբանի հետ, ապա պատասխանել: Սակայն 2016 թ. մայիսի 1-ի դրությամբ դեռ պատասխան չկար:
2. Այգեշատ համայնքի ղեկավարը, ընդունել է, որ չի պատասխանել հարցմանը, ապա ասել, որ դեռ կմտածի՝ պատասխանի թե ոչ:
3. Արազափ համայնքի ղեկավարը պատասխանել է, «...ցուրտը տվել, տարել է ամեն ինչ, ժամանակ չունեմ հարցմանը պատասխանելու»:
4. Երվանդաշատ համայնքի ղեկավարը պատասխանել է, որ մարզպետարանի կայքում կան հարցման պատասխանները, որ ինքն էլ այս հարցմանը չի պատասխանի:
5. Մրգաստան համայնքի ղեկավարը ասել է, որ նամակը չեն ստացել, տեղեկատվությունն էլ չի ցանկանում տրամադրել, այնինչ, ըստ հայփոստի հետադարձ ծանուցագրի վրա առկա ամսաթվի եւ ստորագրության, նամակը գյուղապետարան է հասել 2016 թ-ի հունվարի 12-ին:

Արագածոտնի մարզ

1. Եղնիկ համայնքի ղեկավարն ասել է, որ Ղարաբաղից նոր է վերադարձել, հարցմանը չեն պատասխանելու «...ուզում եք՝ դիմեք դատարան»:
2. Բյուրական համայնքի ղեկավարի տեղակալն էլ ասել է, www.byurakan.com.am կայքից գտեք ձեր հարցման պատասխանները, «...կայքից բացի ուրիշ տեղեկատվություն չեմ տրամադրելու, ուզում եք դիմեք դատարան, ուզում եք եկեք մեզ մոտ, ստացեք ձեր հարցման պատասխանը»:

Վայոց Ձոր

1. Վայքի համայնքապետը պարտաճանաչ պարտավորվել է տրամադրել հարցումը, իրավախորհրդատուին է զանգել 2 անգամ, ճշտումներ կատարելու համար, ապա տրամադրել է հարցված տեղեկությունները:
2. Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը արձագանքել է մեկ օրում, եւ 5-օրյա ժամկետում ուղարկել է հարցված տեղեկությունները:

Սյունիք

1. Աղվանի համայնքի ղեկավարը մարտի 18-ի հեռախոսազրույցի ժամանակ բացատրել է ակումբի իրավախորհրդատուին, թե «...ես ոչ մեկին ոչինչ պարտավոր չեմ տրամադրելու այս տեղեկությունները ...»: Իսկ 2016 թ. ապրիլի 10-ին ակումբ է ուղարկել հարցված բոլոր տեղեկությունները:

Հարցումներին եղած արձագանքները եւ պատասխանները հսկվել են ուշադրությամբ, եւ հարցումներին չպատասխանած համայնքապետերին, իսկ նրանց բացակայության դեպքում՝ համայնքապետարանի մեկ այլ աշխատակցի, ԺԱԱ իրավաբանը հեռախոսային զանգով հիշեցրել է իրենց հասած հարցման մասին, տեղեկացրել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված պատասխանի կարգն ու ժամկետները, ապա խնդրել է հնարավորինս արագ արձագանքել հարցմանը: Բոլոր դեպքերում ԺԱԱ իրավախորհրդատուն եւ այս դիտարկման մասնագետը հեռախոսային խորհրդատվություն են իրականացրել համայնքապետերի կամ նրանց ներկայացուցիչների հետ այն մասին, թե ինչու եւ ինչպես է

հարկավոր պատասխանել հարցումներին, նրանց համար լրացուցիչ մեկնաբանվել են ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի համապատասխան դրույթները:

2016թ. մարտ-մայիս ամիսներին համայնքների ղեկավարներին է զանգահարել ԺԱԱ իրավախորհրդատուն, տեղեկանալու համար, թե ինչու չեն պատասխանում տեղեկատվության հարցմանը եւ չեն տրամադրել հարցված տեղեկությունները: Համայնքների ղեկավարների մոտավորապես 70 տոկոսը զարմացել է այս զանգերից, հարցրել են՝ «ի՞նչ հարցում է եղել, ի՞նչ բովանդակությամբ»: Գրեթե բոլոր հեռախոսազրույցների արդյունքում համայնքի ղեկավարները հայտնել են, որ պատրաստ են տրամադրել հարցվող տեղեկությունները, խոստացել են այդ անել 1-2 շաբաթվա ընթացքում: Եղել են դեպքեր, երբ խնդրել են համայնքի էլեկտրոնային հասցեին կրկին ուղարկել հարցումները (Սյունիքի մարզի Սրաշեն համայնք, Լոռու մարզի Սպիտակ համայնք եւ այլն):

Գեղարքունիքի մարզի Ծափաթաղ համայնքի ղեկավարի հետ մի քանի հեռախոսազրույց է տեղի ունեցել, բայց համայնքի ղեկավարը ձգտել է հարցմանը չպատասխանել, բացատրելով, թե «…. համայնքապետարանում երկու աշխատող ենք, բոլորը Արցախ են գնացել, մեր եւ ձեր անվտանգությունն են ապահովում, իսկ դուք հարցումներ ենք ուղարկում»: Իրավախորհրդատուն բացատրել է, որ ըստ հայփոստի հետադարձ ծանուցագրի, որի վրա համայնքապետի ստորագրությունն է, իրենք հարցումը մարտի սկզբին են ստացել, իսկ Արցախում իրադրությունը սրվել է 2016 թվականի ապրիլի 2-ից, համայնքի ղեկավարը արձագանքել է «… եթե բացեք քարտեզը, կտեսնեք, որ մենք սահմանամերձ համայնք ենք», փորձելով համայնքի աշխարհագրական դիրքը օրենքով սահմանված սեփական պարտականությունը չկատարելու համար արտոնություն սահմանել: Ապա համայնքի ղեկավարը հայտնել է, որ ինքը համակարգչից օգտվել չի կարող եւ «…դրա համար մարդուն չեն կախում, տեղեկությունները պատճենահանելու համար աշխատող չկա», առաջարկել է, որ ակումբն աշխատակից ուղարկի, ակումբի կողմից հարցված տեղեկությունները պատճենահանելու համար: Նաեւ ասել է. «…. Եթե գիտենամ, դատի չեք տա, էլի չեմ ուղարկի, գժվեցրել եք ձեր դատերով, հո կրակը չընկա՞նք»: Հունիսի 4-ի դրությամբ տեղեկությունները չէր տրամադրել՝ դեռ:

Միջանկյալ զեկույցների ներկայացում մարզերում եւ մայրաքաղաքում

Այս մոնիտորինգի միջանկյալ զեկույցը մարզերում համայնքապետերին եւ մարզպետարանի համապատասխան պաշտոնյաներին, ինչպես նաեւ մարզկենտրոններում գործող ԶԼՄ-ներին եւ հասարակական կազմակերպություններին ներկայացնելու համար Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը նամակներ է հղել մարզպետներին, բացատրելով միջանկյալ զեկույցի՝ համայնքապետերին ներկայացնելու անհրաժեշտությունը եւ կարիքը, խնդրելով աջակցել դահլիճի կամ սրահի տրամադրմամբ, նաեւ՝ հրավիրելով մասնակցել զեկույցի ներկայացմանը: Նախնական համաձայնություններից հետո բոլոր 10 մարզային կենտրոններում կազմակերպվել են զեկույցի ներկայացումներ եւ քննարկումներ, որոնց հրավիրվել են համայնքապետերը եւ մարզպետարանի տեղական ինքնակառավարման հարցերով զբաղվող պաշտոնյաները:

Համայնքապետերի հետաքրքրությունը տարբեր մարզերում տարբեր մակարդակ է ունեցել, ինչը ներկայացվում է ստորև:

Աղյուսակ՝ 3.
2016 թ. միջանկյալ զեկույցի մարզային ներկայացման մասնակցության վիճակագրություն.

	Մարզեր եւ մայրաքաղաք Հանրային քննարկման վայր	Հրավիրված համայնքա-պետերի թիվը	Միջանկյալ զեկույցի հանրային ներկայաց-ման օրը	Քննարկմանը մասնակցած համայնքա-պետերի կամ ներկայացու-ցիչների թիվը	Քննարկմանը մասնակցած այլ անձանց թիվը
1	Արագածոտն, Աշտարակի քաղաքապետարանի դահլիճ	114	05.05.2016	11	4
2	Արտաշատ, Արարատի մարզպետարանի դահլիճ	97	02.05.2016	12	6
3	Արմավիր, Արմավիրի մարզպետարանի դահլիճ	97	03.05.2016 03.06.2016	3 2	5 8
4	Գեղարքունիք, Գավառի Երիտասարդական կենտրոն	92	10.05.2016	8	7
5	Լոռի/Վանաձոր, Լոռու մարզպետարանի դահլիճ	107	07.06.2016	15	7
6	Կոտայք, Հրազդան, Կոտայքի մարզպետարանի դահլիճ	67	06.06.2016	17	5
7	Շիրակ, Գյումրի, թիվ 7 դպրոցի դահլիճ	119	23.05.2016	38	12
8	Սյունիք, Կապան, Սյունիքի մարզպետարանի դահլիճ	102	22.04.2016	51	9
9	Վայոց Ձոր, Եղեգնաձոր, Վայոց Ձորի մարզպետարանի դահլիճ	44	21.04.2016	40	8
10	Տավուշ, Իջեւան, Տավուշի մարզպետարանի դահլիճ	56	12.05.2016	10	7
11	Երեւան, Կոնգրես Հյուրանոց	12[4]	08.06.2016	6	13
	Ընդամենը	**917**		**213**	**91**

[4] Երեւան, Արարատի, Արմավիրի, Կոտայքի մարզերի քաղաքային համայնքների համայնքապետեր

Մոնիտորինգի երկրորդ փուլ

Մոնիտորինգի երկրորդ փուլում լրացուցիչ մեկական հարցում է հղվել բոլոր այն համայնքապետերին, ովքեր որոշել էին չպատասխանել ԺԱԱ տեղեկության հարցումներին կամ անտեսել էին դրանք: Երկրորդ հարցման մեջ այդ համայնքապետերին նորից իրազեկվել է մոնիտորինգի նպատակը, համառոտ ներկայացվել են **ՀաՄաՏեղ** ծրագրի նպատակն ու խնդիրները, ինչպես նաեւ հիշեցվել է նախորդ անպատասխան մնացած հարցումը եւ խնդրվել է ակումբին տրամադրել հարցված տեղեկությունները, իսկ դրանց հրապարակված լինելու դեպքում՝ հրապարակումների պատշաճ եւ լիարժեք հղումները: Լրացուցիչ հարցումների ծավալներն ու ժամկետները ներկայացվում են ստորեւ.

Աղյուսակ-4. 2016 թ. նոյեմբերի 05-ի դրությամբ

	Մարզեր եւ մայրաքաղաք	Լրացուցիչ հարցում-ների թիվը	Հարցումն ուղարկելու ամսաթիվը	Պատշաճ ստացված հարցում-ների թիվը	Համայնքապետերի կողմից չստացված եւ վերադարձած հարցումների թիվը
1	Արագածոտն	107	30.08.2016-01.09.2016	100	4 (3 սպասում ենք)
2	Արարատ	72	16.08.2016-17.08.2016	70	1 (1 սպասում ենք)
3	Արմավիր	87	02.09.2016-03.09.2016	84	3
4	Գեղարքունիք	66	16.08.2016-30.08.2016	65	1
5	Լոռի	31	23.08.2016-23.08.2016	30	1
6	Կոտայք	51	02.09.2016-03.09.2016	51	0
7	Շիրակ	83	22.08.2016-23.08.2016	80	3
8	Սյունիք	82	24.08.2016-25.08.2016	81	0
9	Վայոց Ձոր	31	27.08.2016	31	0
10	Տավուշ	36	27.08.2016	36	0
11	Երեւան	0	0	0	0
	Ընդամենը	646		628	13 (4 սպասում ենք)

Հարցումների երկրորդ շարքը հղելուց հետո կրկին անարձագանք թողնված նամակների հասցեատեր համայնքապետերի հետ ծրագրի մասնագետները հեռախոսազրույցներ են ունեցել, կամենալով պարզել, թե ինչու չեն կատարում ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի պահանջները, եւ ինչու չեն պատասխանում ԺԱԱ տեղեկության հարցումներին: Վերլուծելով համայնքապետերի բանավոր բացատրությունները եւ մեկնաբանությունները, տեղեկության հարցումներին նրանց չպատասխանելու կամ անտեսելու պատճառները, դասակարգվել են հետեւյալ խմբերում.

1. **Անուշադրություն սեփական պարտականությունների կատարման նկատմամբ:** համայնքապետերի կամ աշխատակիցների մի մասը պնդում է, որ արդեն ուղարկել են հարցման պատասխանը, իրավախորհրդատուի այն հարցին, թե ինչ եղանակով են ուղարկել՝ փոստո՞վ, թե՞ էլեկտրոնային հասցեին, շփոթվում են, որից հետո ընդունում են,

որ դեռ չեն ուղարկել եւ համաձայնում են պատասխանել տեղեկատվության հարցմանը: Այս խմբում բազմաթիվ են այն համայնքապետերը, որոնք շատ լավ գիտեին «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքից բխած իրենց պարտականությունները:

2. **Խնդիրը չեն ընկալել:** Մասնավորաբար պատասխանում են, թե այս կամ այն կայքում առկա է հարցված տեղեկությունը. հաճախ համայնքապետարանի աշխատակիցները ասում են՝ «գտեք մեր կայքից», կամ՝ մարզպետարանի, արդարադատության նախարարության կայքերից: Այդ դեպքում իրենց բացատրվել է, որ պարտավոր են այդ պատասխանը գրավոր ուղարկել տեղեկությունը գրավոր հարցնողին՝ այս դեպքում Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ, ճշգրիտ նշելով այն համացանցային հասցեները եւ հղումները, որտեղ կարելի է գտնել հարցված տեղեկությունները:

3. **Համայնքների մի մասի խոշորացումը:** Ակնհայտ է եղել այն համայնքապետերի պասիվությունը, որոնց լիազորությունները դադարեցվելու էին ՀՀ համայնքների խոշորացման երկրորդ փուլում: Ըստ ՀՀ համայնքների խոշորացման երկրորդ փուլի պլանի, ՀՀ 118 համայնքներ միավորվելու էին 13 համայնքներում: ՀՀ համայնքների թիվը, որ խոշորացման առաջին փուլից հետո կրճատվել էր 19-ով, երկրորդ փուլում կրճատվելու էր եւս 105-ով, եւ այդ համայնքների ղեկավարները համայնքների լուծարվելուց եւ իրենց լիազորությունների դադարեցումից 2-6 ամիս առաջ չունեին «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջները կատարելու որեւէ մղում: Այս տեսանկյունից, հաջորդ տարիներին այս մոնիտորինգի շարունակման ընթացքում ենթադրաբար դիտվելու է նույն երեւույթը. բոլոր համայնքների համայնքապետերը, որոնց լիազորությունները դադարեցվելու են առաջիկայում, շահագրգռված չեն լինելու պատասխանել տեղեկությունների հարցումներին եւ իրենց պարտականությունները այս մասով թերակատարելու են: Չնայած այս պատճառներին, այս զեկույցում հետագա բոլոր վերլուծությունները բերված են ՀՀ համայնքների ընդհանուր այն թվից, որը ստացվել էր համայնքների խոշորացման առաջին փուլից հետո եւ երկրորդ փուլից առաջ՝ 896-ից:

Աղյուսակ-5. ՀՀ համայնքների խոշորացման քանակական ցուցանիշները 2015-2016 թթ.

Մարզեր եւ մայրաքաղաք	Համայնք-ների թիվը մինչեւ խոշորա-ցումը	Առաջին փուլով խոշորացված փնջեր եւ լուծարված համայնքներ	Համայնքների թիվը խոշորացման առաջին փուլից հետո	Երկրորդ փուլով խոշորացված փնջեր եւ լուծարված համայնքներ	Համայնքների թիվը խոշորացման երկրորդ փուլից հետո	Համայնքների թիվը խոշորացումից առաջ եղած թվի համեմատ
Արագածոտն	114	0	114	2/11+11	94	-20
Արարատ	97	0	97	0	97	0
Արմավիր	97	0	97	0	97	0
Գեղարքունիք	92	0	92	0	92	0
Լոռի	113	1/6	107	0	107	-6
Կոտայք	67	0	67	0	67	0
Շիրակ	119	0	119	4/9+11+9+15	79	-40
Սյունիք	109	1/7	102	4/10+13+4+7	72	-37
Վայոց Ձոր	44	0	44	3/5+4+9	29	-15
Տավուշ	62	1/6	56	0	56	-6
Երեւան	1	0	1	0	1	0
Ընդամենը	**915**	**3/19**	**896**	**13/105**	**791**	**-124**

Վերջնականապես ստացված պատասխանների որակական եւ քանակական ցուցանիշների վերլուծությունը

Համադրելով ամբողջ ծրագրային տարվա (2015թ. հոկտեմբերի 1-ից մինչեւ 2016թ. սեպտեմբերի 30-ը) ընթացքում կատարված աշխատանքը, ստորեւ ամփոփված ներկայացվում են հարցումներին ստացված պատասխանների քանակական եւ որակական ցուցանիշները՝ ըստ մարզերի:

Այս զեկույցում «**լիարժեք պատասխան**» է համարվում այն պատասխանը, որում ներկայացվել են բոլոր հարցված տեղեկությունները կամ պատշաճ հղումներ եւ տրվել համացանցային այն աղբյուրներին, որոնցում հարցված տեղեկությունները առկա են: «**Պատշաճ հղում**» համարվում է այն հղումը, որտեղ մուտք գործելուց հետո լրացուցիչ որոնումների կարիք չկա: Այս զեկույցում «**թերի**» պատասխան համարվում է այն պատասխանը, որում հաղորդվել են հարցված ոչ բոլոր տեղեկությունները կամ տրամադրվել են ոչ պատշաճ հղումներ:

Աղյուսակ՝ 6. (ամբողջ ծրագրային տարվա արդյունքներով. 1.10.2015-30.9.2016)

	մարզեր եւ մայրա-քաղաք	առաջին Հարցում-ների թիվը	երկրորդ հարցում-ների թիվը	ընդամենը ստացված պատաս-խանները	Անպա-տասխան հարցում-ների թիվը	գրավոր եւ էլեկտրոնային պատասխանների թիվը 05.11.2016 դրությամբ	
						լիարժեք պատասխան-ները	թերի պատասխան-ները
1	Արագածոտն	114	107	10	104	4	6
2	Արարատ	97	72	38	59	25	13
3	Արմավիր	97	87	16	81	4	12
4	Գեղարքունիք	92	66	33	59	26	7
5	Լոռի	107	31	85	22	73	12
6	Կոտայք	67	51	20	47	16	4
7	Շիրակ	119	83	46	73	36	10
8	Սյունիք	102	82	35	67	23	12
9	Վայոց Ձոր	44	31	19	25	14	5
10	Տավուշ	56	36	24	32	17	7
11	Երեւան	1	0	1	0	1	0
	Ընդամենը	**896**	**646**	**327**	**569**	**239**	**88**

Տեղեկության հարցման մեջ խնդրանք կար հնարավորության դեպքում հարցված տեղեկությունները ակումբին տրամադրել էլեկտրոնային տարբերակով: Արդյունքում՝ էլեկտրոնային պատասխանները բոլոր պատասխաններում մոտ 92 տոկոս են:

Մոնիտորինգի արդյունքներով՝ 2016 թ. նոյեմբերի 10-ի դրությամբ ամենաակտիվ արձագանքած համայնքապետարանների խումբը Լոռու մարզի համայնքապետարաններն են. դրանցից 68,2%-ը լիարժեք պատասխաններ է տրամադրել, մոտ 11,2%-ը՝ թերի: Լոռու մարզին համայնքապետերին բարեխղճությամբ հաջորդում են Վայոց Ձորի (31,8%), Տավուշի եւ Շիրակի մարզերը (30,4%՝ լիարժեք պատասխան, 12,5%՝ թերի պատասխան՝ Վայոց Ձորի մարզի եւ 30,3%՝ լիարժեք պատասխան, 8,4%՝ թերի պատասխան՝ Շիրակի մարզի համայնքներից):

Տեղեկության հարցումներին ամենապասիվն են արձագանքել Արագածոտնի եւ Արմավիրի մարզերի համայնքները՝ համապատասխանաբար 3,5% եւ 4,1%, Արագածոտնի մարզի համայնքների 5,3 տոկոսից եւ Արմավիրի մարզի համայնքների 12,4 տոկոսից ստացվել են թերի պատասխաններ:

Երեւանի համայնքապետարանը տվել է լիարժեք պատասխան:

ՀՀ ընդհանուր հաշվով, ներառյալ Երեւանը, հարցումներին լիարժեք պատասխան տվել են Հայաստանի 896 համայնքապետարանների 26,8%-ը եւ թերի պատասխան՝ 9,3 տոկոսը:

Հարցումներին ամբողջ մոնիտորինգի ընթացքում չեն պատասխանել Հայաստանի 896 համայնքներից 569-ը՝ մոտ 63,5 %-ը:

Համայնքապետերի արձագանքների որակը ըստ մարզերի՝ դիագրամներով.














ԺԱԱ տեղեկությունների հարցումներին համայնքապետերի արձագանքների վիճակագրությունը եւ պատասխանների որակը:
ՀԱՄԱՏԵՂ ծրագիր, միջանկյալ զեկույց:
Շիրակի մարզ, ընդամենը 119 համայնք:
05.11.2016
Լիարժեք՝ 36 հատ, 30%
Անպատասխան՝ 73 հատ, 61%
Թերի՝ 10 հատ, 9%
ASPAREZ


ԺԱԱ տեղեկությունների հարցումներին համայնքապետերի արձագանքների վիճակագրությունը եւ պատասխանների որակը:
ՀԱՄԱՏԵՂ ծրագիր, միջանկյալ զեկույց:
Սյունիքի մարզ, ընդամենը 102 համայնք:
05.11.2016
Լիարժեք, 23 հատ, 22%
Անպատասխան, 67 հատ, 66%
Թերի, 12 հատ, 12%
ASPAREZ


ԺԱԱ տեղեկությունների հարցումներին համայնքապետերի արձագանքների վիճակագրությունը եւ պատասխանների որակը:
ՀԱՄԱՏԵՂ ծրագիր, միջանկյալ զեկույց:
Վայոց Ձորի մարզ, ընդամենը 44 համայնք:
05.11.2016
Լիարժեք, 14 հատ, 32%
Անպատասխան, 25 հատ, 57%
Թերի, 5 հատ, 11%
ASPAREZ


ԺԱԱ տեղեկությունների հարցումներին համայնքապետերի արձագանքների վիճակագրությունը եւ պատասխանների որակը:
ՀԱՄԱՏԵՂ ծրագիր, միջանկյալ զեկույց:
Տավուշի մարզ, ընդամենը 56 համայնք:
05.11.2016
Լիարժեք՝ 17 հատ, 30%
Անպատասխան՝ 32 հատ, 57%
Թերի՝ 7 հատ, 13%
ASPAREZ


ԺԱԱ տեղեկությունների հարցումներին համայնքապետերի արձագանքների վիճակագրությունը եւ պատասխանների որակը:
ՀԱՄԱՏԵՂ ծրագիր, միջանկյալ զեկույց:
Հայաստան, ընդամենը 896 համայնք:
05.11.2016
Լիարժեք, 240 հատ, 27%
Անպատասխան, 569 հատ, 64%
Թերի, 83 հատ, 9%
ASPAREZ



Աղյուսակ՝ 7. Հարցումներին պատասխանած համայնքներն ըստ մարզերի: Տեղեկության հարցումներին չպատասխանած համայնքների անվանումները աղյուսակում չկան:

	Մարզեր եւ մայրաքաղաք	**Լիարժեք պատասխաններ** ուղարկած համայնքները	**Թերի պատասխաններ** ուղարկած համայնքները
1	Արագածոտն	Թալին, Օշական, Փարպի:	Աշտարակ, Դդմասար, Ապարան, Դաշտադեմ, Զրինջա, Ղազարավան, Շենավան:
2	Արարատ	Ազատավան, Այգեզարդ, Արաքսավան, Այգեստան, Բուրաստան, Դարակերտ, Կանաչուտ, Հնաբերդ, Նոր Խարբերդ, Նորաբաց, Ջրաշեն, Վերին Արտաշատ, ք. Մասիս, Արտաշատ, Քաղցրաշեն, Բյուրավան, Վերին Դվին, Զորակ, Բաղրամյան, Դաշտավան, Դարբնիկ, Հայանիստ, Նորամարգ, Փ. Վեդի, ք. Վեդի:	Ազատաշեն, Այնթափ, Այգավան, Ուրցաձոր, Մխչյան, Արբաթ, Արգավանդ, Բերքանուշ, Լանջազատ, Ուրցաձոր, Պարույր Սեւակ, Վանաշեն, Տափերական:
3	Արմավիր	Այգեկ, Լենուղի, Փարաքար, Էջմիածին:	Աղավնատուն, Գեղակերտ, Դաշտ, Մյասնիկյան, Լեռնամերձ, Այգեւան, Արագած, Գայ, Գրիբոեդով, Լեռնագոգ, Խանջյան, Մայիսյան:
4	Գեղարքունիք	Աղբերք, Բերդկունք, Գանձակ, Գավառ, Կարմիրգյուղ, Դդմաշեն, Թթուջուր, Լանջաղբյուր, Ծաղկունք, Ծովազարդ, Ճամբարակ, Մեծ Մասրիկ, Մարտունի քաղաք, Մաքենիս, Նորակերտ, Նորատուս, Ջիլ, Սեմյոնովկա, Սեւան, Վաղաշեն, Վարդենիս, Գեղամասար, Գեղարքունիք, Լուսակունք, Կարճաղբյուր, Լիճք:	Մարտունի գյուղ, Վահան, Ծովակ, Արտանիշ, Տորֆավան,Շորժա, Շատջրեք:

5	Լոռի	Ագարակ, Ալավերդի, Ամրակից, Անտառաշեն, Ապավեն, Արջուտ, Արեւածագ, Արեւաշող, Բազում, Բլագոդարնոյե, Գարգառ, Գեղասար, Գոգարան, Գուգարք, Դաշտադեմ, Դարպաս, Եղեգնուտ, Թեղուտ, Լեռնանցք, Լեռնապատ, Լեռնավան, Լերմոնտովո, Ծաղկաբեր, Ծաթեր, Կաթնաջուր, Կուրթան, Հալավար, Ջորագետ, Մեծ Պարնի, Նոր Խաչակապ, Նորաշեն, Շահումյան, Շամլուղ, Շնող, Սարահարթ, Սպիտակ, Ստեփանավան, Վահագնաձոր, Վարդաբլուր, Տաշիր, Փամբակ, Օձուն, Անտառամուտ, Արծնի, Դսեղ, Ձյունաշող, Ուռուտ, Ազնվաձոր, Ախթալա, Այգեհատ, Արդվի, Աքորի, Թումանյան, Լեռնահովիտ, Լոռի բերդ, Լուսաղբյուր, Խնկոյան, Կաթնաղբյուր, Ջորագյուղ, Ղուրսալի, Ճոճկան, Մղարթ, Նովոսելցովո, Շենավան, Ուրասար, Պրիվոլնոյե, Ջիլիզա, Սարատովկա, Սարչապետ, Սվերդլով, Քարաձոր, Ֆիոլետովո:	Վանաձոր, Հաղպատ, Կաթնառատ, Կարմիր Աղեկ, Կողես, Հոբարձի, Հովնանաձոր, Ջորամուտ, Չկալով, Սարամեջ, Նեղոց, Բովաձոր:
6	Կոտայք	Աբովյան, Արզական, Բյուրեղավան, Բջնի, Եղվարդ, Նոր Երզնկա, Նոր Հաճն, Չարենցավան, Ջրվեժ, Գետամեջ, Ակունք, Ջորավան, Ծաղկաձոր, Նոր Արտամետ, Սոլակ, Քասախ:	Կարենիս, Նոր Գեղի, Ջրառատ, Վերին Պղնի
7	Շիրակ	Արթիկ, Անիպեմզա, Առափի, Աշոցք, Արեգնադեմ, Արեւիկ, Երազգավորս, Ջորակերտ, Իսահակյան, Լուսաղբյուր, Կամո, Հայկաձոր, Հայկավան, Մեծ Մանթաշ, Մեղրաշեն, Նահապետավան, Շիրակ, Գյումրի, Ջաջուռ, Ջրառատ, Սառնաղբյուր, Շիրակավան, Հովիտ, Հարթաշեն, Գուսանագյուղ, Ամասիա, Արեւշատ, Աղին, Անուշավան, Բագրավան, Բաշգյուղ, Գտաշեն, Ջորաշեն, Մարալիկ, Սարալանջ, Սարապատ:	Կապս, Հայրենյաց, Այգաբաց, Ծաղկուտ, Կարմրաքար, Հառիճ, Ողջի, Վահրամաբերդ, Տուֆաշեն, Բայանդուր
8	Սյունիք	Ագարակ քաղաք, Ախլաթյան, Ակներ, Աղվանի, Աճանան, Արծվանիկ, Շաքի, Իշխանասար, Լիճք, Կապան, Մեղրի, Շվանիձոր, Սիսիան, Վանեք, Վարդանիձոր, Վերիշեն, Օխտար, Ճակատեն, Ներքին Հանդ, Տանձավեր, Առաջաձոր, Դաստակերտ, Լեռնաձոր:	Սյունիք, Ալվանք, Գեղանուշ, Խնձորեսկ, Ջորաստան, Նոր Աստղաբերդ, Շիկահող, Շրվենանց, Ուժանիս, Գեղի, Սեւաքար, Տավրուս:
9	Վայոց Ձոր	Արին, Գլաձոր, Եղեգնաձոր, Խաչիկ, Մարտիրոս, Շատին, Ջերմուկ, Ռինդ, Ագարակաձոր, Արտաբույնք, Աղնջաձոր, Ելփին, Ջեղեա, Վայք:	Արփի, Եղեգիս, Արենի,Սալլի, Վարդահովիտ
10	Տավուշ	Այգեհովիտ, Բերդ, Բերդավան, Գանձաքար, Դովեղ, Իծաքար, Լուսահովիտ, Կողբ, Նոյեմբերյան, Նորաշեն, Ոսկեպար, Չինչին, Սարիգյուղ, Վազաշեն, Այգեձոր, Ջորաթան, Ջուջեւան:	Պտղավան, Խաշթառակ, Դեղձավան, Ակնաբույր, Արծվաբերդ,Գետահովիտ, Պառավաքար:
11	Երեւան	Երեւան	

Ստացված պատասխաններն՝ ըստ օրենքով նախատեսված ժամկետի համապատասխանության

Համայնքապետերին հղված տեղեկության հարցումների նախաբանում նշվում էր, թե **«…հաշվի առնելով, որ ներքոհիշյալ հարցվող տեղեկությունները ծավալուն են եւ օրենքով սահմանված 5 օրը բավարար չէ դրանք տրամադրելու համար, ակնկալում եմ այդ տեղեկությունները Ձեզնից ստանալ 30-օրյա ժամկետում»**: Ըստ այդմ, ստորեւ բերված վերլուծությունում «օրենքով սահմանված ժամկետում տրամադրված տեղեկություններ» ձեւակերպումը ենթադրում է, որ տեղեկությունները ակումբին են տրամադրվել հարցումն համայնքապետարանում ստացվելուց հետո 30-օրյա ժամկետում, իսկ «օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ տրամադրված տեղեկություններ» ձեւակերպումը ենթադրում է, որ հարցված տեղեկությունները ակումբին են տրամադրվել հարցումն համայնքապետարանում ստացվելուց հետո 30-օրյա ժամկետից անց:

Չնայած օրենքի հստակ պահանջին եւ հարցման մեջ եղած այն պարզաբանմանը, թե հարցման պատասխանը ակնկալում ենք ստանալ ոչ թե 5, այլ 30 օրում, համայնքներից միայն 136 (15,2%)-ն են պատասխանել հարցումներին՝ 30-օրյա ժամկետում, 191-ը (21,3%) պատասխանել է ուշացումով, իսկ մնացած 569-ը (63,5%) չի պատասխանել հարցմանը:

Ըստ գրավոր եւ/կամ էլեկտրոնային պատասխանների ժամանակային վիճակագրության, օրենքով սահմանված ժամկետում տրամադրված տեղեկությունների ծավալով մարզային հաշվարկով ամենաբարեխիղճը եղել են Լոռու մարզի համայնքները՝ 31,8%, (ժամկետանց պատասխանները՝ 47,7%): Ժամկետային բարեխղճությամբ Լոռու մարզին հաջորդում են Տավուշի մարզը՝ 26,8% (16,1%՝ ժամկետանց պատասխաններ), ապա Վայոց Ձորի մարզը՝ 22,7% (20,5%՝ ժամկետանց պատասխաններ):

Օրենքով նախատեսված ժամկետում պատասխանելու տեսանկյունից ամենացածր ցուցանիշներն ունեն Արագածոտնի մարզը՝ 2,6% (ժամկետանց պատասխաններով՝6,1%), ապա Արմավիրի մարզը՝ 7,2 % (ժամկետանց պատասխաններով՝ 9,3%):

Երեւանի համայնքապետարանից հարցմանը պատասխանել են օրենքով նախատեսված ժամկետում:

ՀՀ ընդհանուր հաշվով, ներառյալ Երեւանը, հարցումներին 30-օրյա ժամկետում պատասխանել է Հայաստանի 896 համայնքներից 136-ը՝ կամ 15,2%-ը, իսկ ժամկետանց պատասխան տվել 191-ը՝ կամ 21,3 տոկոսը: Հարցումներին չեն պատասխանել Հայաստանի 896 համայնքներից 569-ը՝մոտ 63,5 %-ը:

Մանրամասները ներկայացված են 8-րդ աղյուսակում եւ հարակից դիագրամներում.

Աղյուսակ՝ 8. Հարցումների պատասխաններն ըստ ժամկետի

##	Մարզեր եւ մայրաքաղաք	Առաջին հարցում-ների թիվը	Երկրորդ հարցում-ների թիվը	Օրենքով սահմանված ժամկետում տրամադրված տեղեկություններ	Օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ տրամադրված տեղեկություններ	Անպատաս-խան հարցում-ների թիվը
1	Արագածոտն	114	107	3	7	**104**
2	Արարատ	97	72	12	26	**59**
3	Արմավիր	97	87	7	9	**81**
4	Գեղարքունիք	92	66	18	15	**59**
5	Լոռի	107	31	34	51	**22**
6	Կոտայք	67	51	10	10	**47**
7	Շիրակ	119	83	17	29	**73**
8	Սյունիք	102	82	9	26	**67**
9	Վայոց Ձոր	44	31	10	9	**25**
10	Տավուշ	56	36	15	9	**32**
11	Երեւան	1	0	1	0	**0**
	Ընդամենը	**896**	**646**	**136**	**191**	**569**




Հարցումների պատասխանները ըստ ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով սահմանված ժամկետների: ՀԱՄԱՏԵՂ ծրագիր: Արագածոտնի մարզ, միջանկյալ զեկույց: 05.11.2016
Ժամկետում 2.6%
Ուշացած, 6.1%
Անպատասխան, 91.2%
ԱՍՊԱՐԵԶ
ASPAREZ


Հարցումների պատասխանները ըստ ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով սահմանված ժամկետների: ՀԱՄԱՏԵՂ ծրագիր: Արարատի մարզ, միջանկյալ զեկույց: 05.11.2016
Ժամկետում 12.4%
Անպատասխան, 60.8%
Ուշացած, 26.8%
ԱՍՊԱՐԵԶ
ASPAREZ


Հարցումների պատասխանները ըստ ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով սահմանված ժամկետների: ՀԱՄԱՏԵՂ ծրագիր: Արմավիրի մարզ, միջանկյալ զեկույց: 05.11.2016
Ժամկետում 7.2%
Ուշացած, 9.3%
Անպատասխան, 83.5%
ԱՍՊԱՐԵԶ
ASPAREZ

Հարցումների պատասխանները ըստ ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով սահմանված ժամկետների: ՀԱՄԱՏԵՂ ծրագիր: Գեղարքունիքի մարզ, միջանկյալ զեկույց: 05.11.2016
Ժամկետում 19.6%
Ուշացած, 16.3%
Անպատասխան, 64.1%
ԱՍՊԱՐԵԶ
ASPAREZ


Հարցումների պատասխանները ըստ ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով սահմանված ժամկետների: ՀԱՄԱՏԵՂ ծրագիր: Կոտայքի մարզ, միջանկյալ զեկույց: 05.11.2016
Ժամկետում 14.9%
Ուշացած, 14.9%
Անպատասխան, 70.1%
ԱՍՊԱՐԵԶ
ASPAREZ


Հարցումների պատասխանները ըստ ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով սահմանված ժամկետների: ՀԱՄԱՏԵՂ ծրագիր: Լոռու մարզ, միջանկյալ զեկույց: 05.11.2016
Անպատասխան, 20.6%
Ժամկետում 31.8%
Ուշացած, 47.7%
ԱՍՊԱՐԵԶ
ASPAREZ


Հարցումների պատասխանները ըստ ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով սահմանված ժամկետների: ՀաՄաՏեղ ծրագիր: Շիրակի մարզ, միջանկյալ զեկույց: 05.11.2016
Ժամկետում 14.3%
Ուշացած, 24.4%
Անպատասխան, 61.3%
ASPAREZ


Հարցումների պատասխանները ըստ ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով սահմանված ժամկետների: ՀաՄաՏեղ ծրագիր: Սյունիքի մարզ, միջանկյալ զեկույց: 05.11.2016
Ժամկետում 8.8%
Ուշացած, 25.5%
Անպատասխան, 65.7%
ASPAREZ


Հարցումների պատասխանները ըստ ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով սահմանված ժամկետների: ՀաՄաՏեղ ծրագիր: Վայոց Ձորի մարզ, միջանկյալ զեկույց: 05.11.2016
Ժամկետում 22.7%
Ուշացած, 20.5%
Անպատասխան, 56.8%
ASPAREZ


Հարցումների պատասխանները ըստ ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով սահմանված ժամկետների: ՀաՄաՏեղ ծրագիր: Տավուշի մարզ, միջանկյալ զեկույց: 05.11.2016
Ժամկետում 26.8%
Ուշացած, 16.1%
Անպատասխան, 57.1%
ASPAREZ


ASPAREZ
Համայնքապետերին հղված հարցումների պատասխանները ըստ ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով սահմանված ժամկետների: ՀաՄաՏեղ ծրագիր: Մարզեր եւ Հայաստան: Միջանկյալ զեկույց: 05.11.2016
100.0%
90.0%
80.0%
70.0%
60.0%
50.0%
40.0%
30.0%
20.0%
10.0%
0.0%
ԱՐԱԳԱԾ.
ԱՐԱՐԱՏ
ԱՐՄԱՎԻՐ
ԳԵՂԱՐՔ.
ԼՈՌԻ
ԿՈՏԱՅՔ
ՇԻՐԱԿ
ՍՅՈՒՆԻՔ
Վ. ՁՈՐ
ՏԱՎՈՒՇ
ՀԱՅԱՍՏԱՆ
Ժամկետում
Ուշացումով
Անպատասխան

Բաժին 2.

ՏԻՄ կողմից ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված տեղեկությունների պաշարի պրոակտիվ տրամադրումը հանրությանը:

Մոնիտորինգի երկրորդ խնդիրն է եղել՝ պարզել, թե ՀՀ համայնքապետերը որքանով են իրականացնում ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի յոթերորդ հոդվածով նախատեսված իրենց պարտականությունները. հրապարակում ՏԻՄ-երի կողմից հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) ծրագրերի, աշխատանքների եւ ծառայությունների մասին, այդ թվում նաեւ համայնքի զարգացման քառամյա ծրագրի մասին, համայնքի բյուջեի մասին, ՏԻՄ-երին հղվելիք գրավոր հարցումների ձեւերը եւ դրանք լրացնելու վերաբերյալ խորհրդատվական ցուցումները, համայնքի պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները, համայնքի աշխատակազմում աշխատանքի ընդունման կարգը եւ թափուր աշխատատեղերը, շրջակա միջավայրի վրա համայնքապետարանի ներգործությունը, համայնքում հասարակական միջոցառումների ծրագրերը, համայնքի ղեկավարի եւ ավագանու անդամների մոտ քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը, վայրը եւ այլն: (ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը տես այս զեկույցի 2-րդ հավելվածում):

Դա պարզելու համար, համայնքապետերին հղված տեղեկության հարցումներում ներառվել է մի քանի հարց, որոնք ուղղակի հարցնում են այդ պրոակտիվ պարտականությունների կատարման մասին: Այդ հարցերն են.

> ... 10. 2014-2015 թթ. ընթացքում արդյո՞ք հրապարակել եք հետեւյալ տեղեկությունները, որոնց հրապարակումը նախատեսված է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով, եթե այո, ապա որտե՞ղ եւ ե՞րբ.
>
> 1. ՏԻՄ-երի կողմից հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) ծրագրերի, աշխատանքների եւ ծառայությունների մասին, այդ թվում նաեւ համայնքի զարգացման քառամյա ծրագրի մասին.
> 2. Համայնքի բյուջեի մասին,
> 3. ՏԻՄ-երին հղվելիք գրավոր հարցումների ձեւերը եւ դրանք լրացնելու վերաբերյալ խորհրդատվական ցուցումները,
> 4. Համայնքի պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները,
> 5. Համայնքի աշխատակազմում աշխատանքի ընդունման կարգը եւ թափուր աշխատատեղերը,
> 6. Շրջակա միջավայրի վրա համայնքապետարանի ներգործությունը,
> 7. Համայնքում հասարակական միջոցառումների ծրագրերը,

8. Համայնքի ղեկավարի եւ ավագանու անդամների մոտ քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը եւ վայրը,
9. ՏԻՄ-երի կողմից մատուցվող ծառայությունների բնագավառում գնագոյացման կարգը եւ դրանց վճարների մասին,
10. Համայնքի ղեկավարի կողմից տնօրինվող տեղեկությունների ցանկը եւ դրանց տնօրինման կարգը,
11. Համայնքի աշխատակազմում ստացված հարցումների եւ դիմումների վերաբերյալ վիճակագրական եւ ամփոփ տվյալները, այդ թվում՝ բավարարված եւ մերժված դիմումների թիվը եւ մերժման հիմքերը,
12. Այս հարցման 10.1-10.11 կետերով սահմանված տեղեկությունների մշակման կամ ստացման աղբյուրները,
13. Այս հարցման 10.1-10.11 կետերով սահմանված տեղեկությունները պարզաբանելու իրավասություն ունեցող անձի տվյալները:

Համայնքապետերի պատասխանները ի մի են բերվել հետեւյալ աղյուսակում: Հարկավոր է հաշվի առնել, որ այս ամփոփագիրը կազմված է միայն հարցումներին ստացված պատասխաններից: Հարցումներին օրենքի խախտմամբ չպատասխանած համայնքապետարան-ներում այս մոնիտորինգի շրջանակներում այլ ուսումնասիրություն չի իրականացվել եւ անհնար է ասել, արդյո՞ք ՀՀ այդ 569 (ՀՀ բոլոր համայնքների 63,5%) համայնքներում իրականացվում է ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 7-րդ հոդվածով պահանջվող տեղեկությունների պրոակտիվ հրապարակումը:

Աղյուսակ՝ 9. 2016 թ. նոյեմբերի 05-ի դրությամբ

	Մարզեր եւ մայրաքաղաք	Հարցում ստացած համայնք-ների թիվը	Հարցմանը չեն պատաս-խանել	Ընդամենը ստացված պատաս-խանները	ՀՀ «ՏԱ» օրենքի 7-րդ հոդվածի պահանջը կատարում է	ՀՀ «ՏԱ» օրենքի 7-րդ հոդվածի պահանջը մասնակի է կատարում	ՀՀ «ՏԱ» օրենքի 7-րդ հոդվածի պահանջը չի կատարում	ՀՀ «ՏԱ» օրենքի 7-րդ հոդվածի մասին հարցին չի պատաս-խանել
1	Արագածոտն	114	104	10	1	4	5	0
2	Արարատ	97	59	38	19	8	9	2
3	Արմավիր	97	81	16	3	0	13	0
4	Գեղարքունիք	92	59	33	12	4	15	2
5	Լոռի	107	22	85	15	31	35	4
6	Կոտայք	67	47	20	6	5	9	0
7	Շիրակ	119	73	46	2	10	30	4
8	Սյունիք	102	67	35	6	4	22	3
9	Վայոց Ձոր	44	25	19	4	7	7	1
10	Տավուշ	56	32	24	5	1	17	1
11	Երեւան	1	0	1	1	0	0	0
	Ընդամենը	**896**	**569**	**327**	**74**	**74**	**162**	**17**

Հարցմանը պատասխաններ ուղարկած 327 համայնքների ղեկավարներից 17-ը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի պահանջների իրականացման մասին հարցին չեն պատասխանել: Իսկ մյուս 310 համայնքապետերի տրամադրած տեղեկությունների համապատասխան, օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները (հանրային նշանակության տեղեկությունների պրոակտիվ հրապարակումը) ամբողջությամբ կատարում է ՀՀ բոլոր՝ 896 համայնքապետերից 74-ը (մոտ 8,26%), մասնակի է կատարում 74-ը (մոտ 8,26%), իսկ 162-ը այդ պահանջներից ոչ մեկը չեն կատարում (18,08%): Հարցումներին այս մասով չեն պատասխանել Հայաստանի 896 համայնքներից 586-ը:

Օրենքի հիշյալ պահանջի ամբողջական կատարմամբ, ըստ համայնքապետերից ստացված պատասխանների, հարաբերականորեն ամենաբարեխիղճը Արարատի մարզի համայնքապետերն են, մարզի համայնքների մոտավորապես 19,6%-ը, (մասնակի են կատարում 8,25%-ը): Արարատի մարզի համանքապետերի այդ խմբին հաջորդում են Լոռու մարզի համայնքապետերը՝ 14%-ը (28,9%-ը՝ մասնակի են կատարում օրենքի այդ պահանջը), ապա Գեղարքունիքի մարզի համայնքապետերն են՝ 13,0% (մասնակի են կատարում 4,3%-ը):

ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանրային նշանակության տեղեկությունների պրոակտիվ հրապարակման պահանջը, դատելով համայնքապետերից ստացված պատասխաններից, ամենավատը կատարում են Արագածոտնի մարզի համայնքապետերը, 114 համայնքապետերից միայն մեկն է տեղեկացրել, որ հրապարակում է օրենքով նախատեսված այդ տեղեկությունները՝ 0,88% (մասնակի հրապարակում են 3,51%-ը), նախավերջին տեղում է Շիրակի մարզը, 119 համայնքապետերից միայն երկուսն են պատասխանում նշել, թե այդ տեղեկությունները իրենք հրապարակում են՝ 1,81% (մասնակի հրապարակում են 8,47%-ը):

Մանրամասները ներկայացված են հարակից դիագրամներում.



Տարեկան զեկույց. 2016թ

ԱՐԱԳԱԾՈՏՆ-114 համայնք

Տեղեկությունների պրոակտիվ տարածումը համայնքապետարանների կողմից. ՀՀ «ՏԱ» օրենքի 7-րդ հոդված ՀԱՄԱՏԵՂ ծրագիր, ԺԱԱ, 2016 թ. զեկույց



ԱՐԱՐԱՏ-97 համայնք

Տեղեկությունների պրոակտիվ տարածումը համայնքապետարանների կողմից. ՀՀ «ՏԱ» օրենքի 7-րդ հոդված ՀԱՄԱՏԵՂ ծրագիր, ԺԱԱ, 2016 թ. զեկույց



ԱՐՄԱՎԻՐ-97 համայնք

Տեղեկությունների պրոակտիվ տարածումը համայնքապետարանների կողմից. ՀՀ «ՏԱ» օրենքի 7-րդ հոդված ՀԱՄԱՏԵՂ ծրագիր, ԺԱԱ, 2016 թ. զեկույց



ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-92 համայնք

Տեղեկությունների պրոակտիվ տարածումը համայնքապետարանների կողմից. ՀՀ «ՏԱ» օրենքի 7-րդ հոդված ՀԱՄԱՏԵՂ ծրագիր, ԺԱԱ, 2016 թ. զեկույց



ԿՈՏԱՅՔ-67 համայնք

Տեղեկությունների պրոակտիվ տարածումը համայնքապետարանների կողմից. ՀՀ «ՏԱ» օրենքի 7-րդ հոդված ՀԱՄԱՏԵՂ ծրագիր, ԺԱԱ, 2016 թ. զեկույց



ԼՈՌԻ-107 համայնք

Տեղեկությունների պրոակտիվ տարածումը համայնքապետարանների կողմից. ՀՀ «ՏԱ» օրենքի 7-րդ հոդված ՀԱՄԱՏԵՂ ծրագիր, ԺԱԱ, 2016 թ. զեկույց













Տարեկան զեկույց. 2016թ

Աղյուսակ՝ 10.

Այս աղյուսակում ներկայացված են այն համայնքների տեղական ինքնակառավարման մարմինները, որոնք, ըստ համայնքապետերից ստացված պատասխանների, ամբողջությամբ կամ մասնակիորեն կատարում են ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները եւ իրենց նախաձեռնությամբ հրապարակում են հանրային նշանակության համապատասխան տեղեկությունները: Տեղեկության հարցումներին չպատասխանած համայնքների անվանումները աղյուսակում չկան:

	Մարզեր եւ մայրա-քաղաք	ՀՀ «ՏԱ» օրենքի 7-րդ հոդվածի պահանջը **ամբողջությամբ է կատարում**	ՀՀ «ՏԱ» օրենքի 7-րդ հոդվածի պահանջը **մասնակի է կատարում**
1	Արագածոտն	Ապարան	Փարպի, Շենավան, Թալին, Աշնակ
2	Արարատ	Այգեզարդ, Ազատավան, Բաղրամ-յան, Դաշտավան, Դարբնիկ, Զորակ, Կանաչուտ, Հայանիստ, Հնաբերդ, Նորաբաց, Նորամարգ, Ջրաշեն, Վերին Արտաշատ, Վերին Դվին, Փոքր Վեդի, Մասիս քաղաք, Արտա-շատ, քաղաք Վեդի, Քաղցրաշեն	Արաքսավան, Արբաթ, Արգավանդ, Բյուրավան, Բուրաստան, Դարակերտ, Նոր Խարբերդ, Տափերական
3	Արմավիր	Էջմիածին, Փարաքար, Այգեկ	
4	Գեղարքունիք	Բերդկունք, Գավառ, Գեղամասար, Լանջաղբյուր, Լիճք, Ծաղկունք, Ծովազարդ, Կարմիրգյուղ, Նորատուս, Ջիլ, Սեւան, Վաղաշեն	Ճամբարակ, Գեղարքունիք, Գանձակ, Վարդենիս
5	Լոռի	Սպիտակ, Ստեփանավան, Վահագնաձոր, Վանաձոր, Օձուն, Արեւաշող, Գուգարք, Լեռնապատ, Լեռմոնտովո, Հալավար, Ջորագետ, Ղուրսալ, Շահումյան, Շամլուղ, Տաշիր	Ագարակ, Բազում, Ախթալա, Գեղասար, Լոռի Բերդ, Ծաղկաբեր, Հաղպատ, Մեծ Պառնի, Շենավան, Շնող, Ձյունաշող, Մղարթ, Նովոսելցովո, Ուռուտ, Ուրասար, Ջիլիզա, Պրիվոլնոյե, Սարչապետ, Սարատովկա, Սվերդլով, Ֆիոլետովո, Քարաձոր, Չկալով, Ճոճկան, Լեռնավան, Թեղուտ, Դսեղ, Գոգարան, Արեւածագ, Արծնի, Ազնվաձոր
6	Կոտայք	Արզական, Բջնի, Նոր Գեղի, Նոր Հաճն, Ջրվեժ, Սոլակ	Աբովյան, Ակունք, Ջորավան, Նոր Երզնկա, Չարենցավան
7	Շիրակ	Գյումրի, Սարալանջ	Արթիկ, Այգաբաց, Անուշավան, Արեւիկ, Ջորակերտ, Մեծ Մանթաշ, Մեղրաշեն, Նահապետավան, Ջաջուռ, Ջրառատ
8	Սյունիք	Դաստակերտ, Լեռնաձոր, Կապան, Ներքին Հանդ, Շաքի, Սիսիան	Իշխանասար, Ճակատեն, Մեղրի, Վարդանիձոր
9	Վայոց Ձոր	Արփի, Շատին, Ջերմուկ, Վայք	Աղնջաձոր, Գլաձոր, Եղեգնաձոր, Ագարակաձոր, Ռինդ, Խաչիկ, Մարտիրոս
10	Տավուշ	Բերդ, Գանձաքար, Դովեղ, Նոյեմբերյան, Չորաթան	Այգեհովիտ
11	Երեւան	Երեւան	
	Ընդամենը	**74**	**74**

Բաժին՝ 3.

ՏԻՄ կողմից ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով[5] սահմանված՝ թափանցիկության, հաշվետվողականության եւ հանրային մասնակցության պարտավորությունների կատարման ծավալը եւ որակը

2013 թվականին ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում ՀՀ Ազգային ժողովը մի շարք լրացումներ է ընդունել, որոնք հանրությանն հնարավորություն են ընձեռում ավելի ակտիվորեն մասնակցելու տեղական ինքնակառավարմանը: Այդ նորամուծությունների թվում են համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ստեղծման անհրաժեշտությունը, որոնցում, ի թիվս համայնքապետարանի աշխատակիցների եւ ավագանու անդամների, պետք է ընդգրկվեն համայնքի բնակիչներ եւ մասնագետներ, տեղական ինքնակառավարմանը հանրության մասնակցությունը ապահովող եւ կարգավորող՝ ավագանու կողմից ընդունվելիք համապատասխան կարգերը, այս թվում խորհրդակցական մարմինների ստեղծման կարգը, հանրային լսումների կազմակերպման եւ անցկացման կարգը, հանրագրի իրականացման ձեւերը եւ պահանջները ներկայացնելու կարգը:

Մոնիտորինգի այս բաղադրիչի նպատակը ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով սահմանված վերոհիշյալ բաղադրիչների իրականացման ուսումնասիրությունն է. պարզել, թե ինչպիսին է վիճակը համայնքապետարաններում այնպիսի պարտավորությունների կատարման մասով, ինչպիսիք են հանրային լսումների անցկացման կարգի գոյությունը եւ պրակտիկան, համայնքապետի խորհրդակցական մարմնի ստեղծման կարգը եւ պրակտիկան, քաղաքացիների նախաձեռնությամբ ավագանու որոշման նախագծի առաջխաղացման կարգը, պրակտիկան եւ այլն: Այս ոլորտում իրավիճակը պարզելու համար, համայնքապետերին հղված հարցման մեջ ներառնել են մի շարք հարցեր, որոնց պատասխանների հիման վրա ամփոփվել եւ հանրագումարվել է մարզային իրավիճակը եւ համահայաստանյան ընդհանրական պատկերը:

Հարցման մեջ ներառնել են հետեւյալ հարցերը.

...

7. Համայնքի ավագանու կողմից ընդունվե՞լ են արդյոք տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության վերաբերյալ օրենքով սահմանված 3 կարգերը,
8. Համայնքի ղեկավարին կից ձեւավորվե՞լ են արդյոք հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմիններ: Բերեք դրանց անվանումները եւ անդամների քանակը:
9. Քանի՞ հանրային լսումներ կամ քննարկումներ են կազմակերպվել եւ անցկացվել համայնքում 2014-2015 թվականների ընթացքում: Եթե այդպիսիք անցկացվել են, ապա

    9.1. Ի՞նչ խնդիրների քննարկման համար են հրավիրվել դրանք,
    9.2. Ե՞րբ են տեղի ունեցել դրանք,
    9.3. Ի՞նչ եղանակներով է հանրությունը իրազեկվել դրանց մասին,

[5] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք՝ http://parliament.am/legislation.php?sel=show&ID=1305&lang=arm

9.4. Քանի՞ հոգի է մասնակցել դրանցից յուրաքանչյուրին,

9.5. Համայնքի Ավագանուն տրամադրվե՞լ է արդյոք տեղեկատվություն դրանցից յուրաքանչյուրի վերաբերյալ:

Ստորեւ ներկայացվում են թվով 310 համայնքապետարաններից ստացված պատասխանների ամփոփագրերը՝ ըստ մարզերի՝ յուրաքանչյուր հարցի շուրջ:

«7. Համայնքի ավագանու կողմից ընդունվե՞լ են արդյոք տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության վերաբերյալ օրենքով սահմանված 3 կարգերը:»

Ստորեւ բերված աղյուսակում ներկայացված են ըստ մարզերի քանակական տվյալներ այն մասին, թե ըստ համայնքապետերի պատասխանների, քանի համայնքում են ավագանիները ընդունել տեղական ինքնակառավարմանը հանրային մասնակցությունը ապահովելու կոչված՝ օրենքով նախատեսված կարգերը:

Աղյուսակ՝ 11.

Մարզեր եւ մայրաքաղաք	Համայնքների թիվը	Պատասխանել է հարցումներին	Ընդունել է հանրային մասնակցության կարգերը	Չի ընդունել հանրային մասնակցության կարգերը	Չի պատասխանել հարցումներին
Արագածոտն	114	10	4	6	104
Արարատ	97	38	31	7	59
Արմավիր	97	16	9	7	81
Գեղարքունիք	92	33	22	11	59
Լոռի	107	85	56	29	22
Կոտայք	67	20	16	4	47
Շիրակ	119	46	36	10	73
Սյունիք	102	35	23	12	67
Վայոց Ձոր	44	19	14	5	25
Տավուշ	56	24	10	14	32
Երեւան	1	1	1	0	0
Ընդամենը	**896**	**327**	**222**	**105**	**569**

Ըստ 327 համայնքապետերից ստացված պատասխանների, համայնքում տեղական ինքնակառավարմանը քաղաքացիների մասնակցությունը ապահովող օրենքով նախատեսված կարգերի ընդունման հարցում առաջատար է Լոռու մարզը՝ բոլոր համայնքների ՏԻՄ-երի 52,34%-ը, ըստ համայնքապետերի պատասխանների, կատարել է օրենքի պահանջը, 27,1%-ը չի կատարել, մյուսները չեն պատասխանել հարցմանը: Լոռու մարզի համայնքներին հաջորդում են Արարատի մարզը՝ 31,96%, ապա Վայոց Ձորի մարզը՝ 31,82%, ապա Շիրակի մարզը՝ 30,25%:

Օրենքով նախատեսված այս կարգերի ընդունման հարցում ամենապասիվը Արագածոտնի մարզի համայնքներն են. 114 համայնքապետարաններից միայն 4-ն են տեղեկացրել, թե իրենց ավագանին ընդունել է այդ կարգերը (3,51%), նախավերջին տեղում Արմավիրի մարզն է, որի 97 համայնքապետերից միայն 9-ն են տեղեկացրել, թե իրենց ավագանին ընդունել է հիշյալ կարգերը (9,28%):

Երեւանի համայնքապետարանից տեղեկացրել են, որ ավագանին ընդունել է հանրային մասնակցության համար օրենքով սահմանված այդ կարգերը:

Հայաստանի բոլոր 896 համայնքներից 222-ի համայնքապետերն են պատասխաններում նշել, թե այդ կարգերն ընդունվել են իրենց համայնքում (24,78%), հարցումներին պատասխանած 105 համայնքապետ տեղեկացրել է, որ այդ կարգերը չեն ընդունվել (11,72%): Համայնքապետերի 63,5%-ը հարցմանը չի պատասխանել՝ խախտելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջները:

Աղյուսակ՝ 12. Այստեղ ներկայացված են այն համայնքները, որտեղ ավագանին ընդունել է հանրային մասնակցության համար օրենքով նախատեսված կարգերը: Տեղեկության հարցումներին չպատասխանած համայնքների անվանումները աղյուսակում չկան:

	Մարզեր եւ մայրա-քաղաք	Ընդունել է հանրային մասնակցության կարգերը	Չի ընդունել հանրային մասնակցության կարգերը
1	Արագածոտն	Ապարան, Զարինջա, Ղազարավան, Օշական	Աշտարակ, Դաշտադեմ, Դդմասար, Թալին, Շենավան, Փարպի
2	Արարատ	Ազատաշեն, Ազատավան, Այգեզարդ, Այգեստան, Արաքսավան, Արգավանդ, Բաղրամյան, Բերքանուշ, Բյուրավան, Բուրաստան, Դաշտավան, Դարակերտ, Դարբնիկ, Զորակ, Լանջազատ, Կանաչուտ, Հայանիստ, Հնաբերդ, Միսչյան, Նորաբաց, Նորամարգ, Ուրցաձոր, Զրաշեն, Վերին Արտաշատ, Վերին Դվին, Վանաշեն, Փոքր Վեդի, ք. Մասիս, Արտաշատ, ք. Վեդի, Քաղցրաշեն	Այգավան, Այնթափ, Արբաթ, Նոր Խարբերդ, Պ. Սեւակ, Տափերական, ք. Մասիս
3	Արմավիր	Աղավնատուն, Այգեկ, Այգեվան, Գայ, Դաշտ, Էջմիածին, Լեռնագոգ, Խանջյան, Մայիսյան	Փարաքար, Մյասնիկյան, Լեռնամերձ, Լենուղի, Գրիբոյեդով, Գեղակերտ, Արագած
4	Գեղարքունիք	Արտանիշ, Բերկունք, Գավառ, Գեղամասար, Գեղարքունիք, Դդմաշեն, Թթուջուր, Լանջաղբյուր, Լիճք, Լուսակունք, Ծաղկունք, Ծովազարդ, Ծովակ, Կարմիր գյուղ, Ճամբարակ, գ. Մարտունի, Նորատուս, Շորժա, Ջիլ, Սեւան, Վաղաշեն, Տորֆավան	Աղբերք, Գանձակ, Կարճաղբյուր, Մեծ Մասրիկ, ք. Մարտունի, Մաքենիս, Նորակերտ, Շատջրեք, Սեմյոնովկա, Վահան, Վարդենիս
5	Լոռի	Ֆիոլետովո, Օձուն, Քարաձոր, Տաշիր, Վարդաբլուր, Վահագնաձոր, Ստեփանավան,	Փամբակ, Վանաձոր, Չկալով, Նորաշեն, Նոր

		Սվերդլով, Սպիտակ, Սարչապետ, Սարատովկա, Սարամեջ, Սարահարթ, Ջիլիզա, Պրիվոլնոյե, Ուրասար, Ուրուտ, Շնող, Շիրակամուտ, Շենավան, Շամլուղ, Շահումյան, Նովոսելցովո, Նեղոց, Մղարթ, Մեծ Պարնի, Ճոճկան, Ղուրսալ, Ջորագյուղ, Ջորագետ, Ջյունաշող, Հալավար, Կարմիր Աղեկ, Կաթնաջուր, Լոռի Բերդ, Լերմոնտովո, Լեռնավան, Լեռնապատ, Լեռնանցք, Դսեղ, Դաշտադեմ, Գուգարք, Գոգարան, Գեղասար, Գարգառ, Բլագոդարնոյե, Բազում, Աքորի, Արեւաշող, Արեւածագ, Արծնի, Արդվի, Ապավեն, Այգեհատ, Աղնվաձոր, Ագարակ	Խաչակապ, Ջորամուտ, Հովնանաձոր, Հոբարձի, Հաղպատ, Կուրթան, Կողես, Կաթնառատ, Կաթնաղբյուր, Ծաղկաբեր, Ծաթեր, Խնկոյան, Լուսաղբյուր, Լեռնահովիտ, Թումանյան, Թեղուտ, Եղեգնուտ, Դարպաս, Բովաձոր, Արջուտ, Անտառաշեն, Անտառամուտ, Ամրակից, Ախթալա, Ալավերդի
6	Կոտայք	Աբովյան, Ակունք, Արզական, Բյուրեղավան, Բջնի, Գետամեջ, Եղվարդ, Ջորավան, Ծաղկաձոր, Չարենցավան, Նոր Հաճն, Նոր Երզնկա, Ջրառատ, Սոլակ, Ջրվեժ, Վերին Պտղնի	Կարենիս, Նոր Արտամետ, Նոր Գեղի, Քասախ
7	Շիրակ	Ամասիա, Արթիկ, Անուշավան, Արեւիկ, Բայանդուր, Գյումրի, Գուսանագյուղ, Երազգավորս, Ջորակերտ, Կապս, Հայրենյաց, Հառիճ, Մարալիկ, Մեղրաշեն, Ողջի, Ջաջուռ, Ջրառատ, Վահրամաբերդ, Տուֆաշեն	Անիպեմզա, Առափի, Արեւշատ, Աղին, Այգաբաց, Աշոցք, Արեգնադեմ, Բագրավան, Բաշգյուղ, Իսահակյան, Լուսաղբյուր, Ծաղկուտ, Կամո, Կարմրաքար, Հայկաձոր, Հայկավան, Հարթաշեն, Հովիտ, Ջորաշեն, Մեծ Մանթաշ, Նահապետավան, Շիրակ, Շիրակավան, Սարապատ, Սառնաղբյուր, Սարալանջ, Գտաշեն
8	Սյունիք	Ախլաթյան, ք. Ագարակ, Ակներ, Աճանան, Առաջաձոր, Գեղանուշ, Լեռնաձոր, Խնձորեսկ, Կապան, Ճակատեն, Մեղրի, Ներքին Հանդ, Նոր Աստղաբերդ, Շաքի, Շիկահող, Շրվենանց, Ուժանիս, Սիսիան, Վարդանիձոր, Տանձավեր	Ալվանք, Աղվանի, Արծվանիկ, Գեղի, Դաստակերտ, Իշխանասար, Լիճք, Ջորաստան, Շվանիձոր, Սյունիք, Սեւաքար, Վանեք, Վերիշեն, Տավրուս, Օխտար
9	Վայոց Ձոր	Ագարակաձոր, Աղնջաձոր, Արենի, Արտաբույնք, Գլաձոր, Ելփին, Եղեգնաձոր, Խաչիկ, Մարտիրոս, Շատին, Ջերմուկ, Ռինդ, Սալլի, Վայք	Արփի, Արին, Եղեգիս, Ջեղեա, Վարդահովիտ
10	Տավուշ	Ակնաղբյուր, Արծվաբերդ, Բերդավան, Գանձաքար, Դովեղ, Նոյեմբերյան, Ոսկեպար, Չինչին, Չորաթան, Պառավաքար	Այգեհովիտ, Այգեձոր, Բերդ, Գետահովիտ, Դեղձավան, Իծաքար, Լուսահովիտ, Խաշթառակ, Կողբ, Նորաշեն, Պտղավան, Ջուջեւան, Սարիգյուղ, Վազաշեն
11	Երեւան	Երեւան	


ԱՐԱԳԱԾՈՏՆ-114 համայնք
Ընդունե՞լ է արդյոք համայնքի ավագանին տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության համապատասխան կարգերը
ՀԱՄԱՏԵՂ ծրագիր, ԺԱԱ, 2016 թ. զեկույց
Չի պատասխանել հարցումներին, 104, 91%
Ընդունել է հանրային մասնակցության կարգերը, 4, 4%
Չի ընդունել հանրային մասնակցության կարգերը, 6, 5%
ASPAREZ


ԱՐԱՐԱՏ-97 համայնք
Ընդունե՞լ է արդյոք համայնքի ավագանին տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության համապատասխան կարգերը
ՀԱՄԱՏԵՂ ծրագիր, ԺԱԱ, 2016 թ. զեկույց
Ընդունել է հանրային մասնակցության կարգերը, 31, 32%
Չի պատասխանել հարցումներին, 59, 61%
Չի ընդունել հանրային մասնակցության կարգերը, 7, 7%
ASPAREZ


ԱՐՄԱՎԻՐ-97 համայնք
Ընդունե՞լ է արդյոք համայնքի ավագանին տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության համապատասխան կարգերը
ՀԱՄԱՏԵՂ ծրագիր, ԺԱԱ, 2016 թ. զեկույց
Ընդունել է հանրային մասնակցության կարգերը, 9, 9%
Չի պատասխանել հարցումներին, 81, 84%
Չի ընդունել հանրային մասնակցության կարգերը, 7, 7%
ASPAREZ


ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-92 համայնք
Ընդունե՞լ է արդյոք համայնքի ավագանին տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության համապատասխան կարգերը
ՀԱՄԱՏԵՂ ծրագիր, ԺԱԱ, 2016 թ. զեկույց
Ընդունել է հանրային մասնակցության կարգերը, 22, 24%
Չի պատասխանել հարցումներին, 59, 64%
Չի ընդունել հանրային մասնակցության կարգերը, 11, 12%
ASPAREZ


ԼՈՌԻ-107 համայնք
Ընդունե՞լ է արդյոք համայնքի ավագանին տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության համապատասխան կարգերը
ՀԱՄԱՏԵՂ ծրագիր, ԺԱԱ, 2016 թ. զեկույց
Չի պատասխանել հարցումներին, 22, 21%
Ընդունել է հանրային մասնակցության կարգերը, 56, 52%
Չի ընդունել հանրային մասնակցության կարգերը, 29, 27%
ASPAREZ


ԿՈՏԱՅՔ-67 համայնք
Ընդունե՞լ է արդյոք համայնքի ավագանին տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության համապատասխան կարգերը
ՀԱՄԱՏԵՂ ծրագիր, ԺԱԱ, 2016 թ. զեկույց
Ընդունել է հանրային մասնակցության կարգերը, 16, 24%
Չի պատասխանել հարցումներին, 47, 70%
Չի ընդունել հանրային մասնակցության կարգերը, 4, 6%
ASPAREZ











Տարեկան զեկույց. 2016թ



«8. Համայնքի ղեկավարին կից ձեւավորվե՞լ են արդյոք հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմիններ: Բերեք դրանց անվանումները եւ անդամների քանակը:»

Ըստ 327 համայնքապետերից ստացված պատասխանների, համայնքներում **հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների ձեւավորման հարցում** առաջատար է Լոռու մարզը, որի բոլոր համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների 46,73%-ում ձեւավորվել են դրանք (չեն ձեւավորվել 32,71%-ում), Լոռու մարզին հաջորդում են Արարատի մարզը (29,9%) եւ Վայոց Ձորի մարզը (29,55%), համապատասխանաբար, այդ մարզերի համայնքների 9,28 եւ 13,64 տոկոսում չեն ձեւավորվել խորհրդակցական մարմինները:

Օրենքով նախատեսված այս պարտավորության կատարման ամենացածր ցուցանիշը Արագածոտն մարզի համայնքներինն է՝ 4,9%, նախավերջում՝ Արմավիրի մարզն է, որի համայնքների ընդամենը 9,28%-ում են ձեւավորվել խորհրդակցական մարմինները:

Երեւանի համայնքապետարանից տեղեկացրել են, որ հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինները ձեւավորվել են:

Հայաստանի բոլոր 896 համայնքներից 177-ի համայնքապետերն են պատասխաններում նշել, թե հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինները իրենց համայնքներում ձեւավորվել են (19,4%), հարցումներին պատասխանած 150 համանքապետ տեղեկացրել է, որ այդ մարմինները չեն ձեւավորվել (16,74%): Համայնքապետերի 63,5%-ը հարցմանը չի պատասխանել: Մանրամասները ներկայացված են հաջորդող աղյուսակում եւ դիագրամներում:

Աղյուսակ՝ 13. Այստեղ ներկայացված են այն խորհրդակցական մարմիններ ձեւավորած եւ չձեւավորած համայնքների քանակական պատկերն ըստ մարզերի:

Մարզեր եւ մայրաքաղաք	Համայնք-ների թիվը	Պատաս-խանել է հարցում-ներին	Խորհրդակ-ցական մարմին ձեւավորվել է	Չի ձեւավորվել խորհրդակցակ ան մարմին	Չի պատաս-խանել հարցումներ ին
Արագածոտն	114	10	5	5	104
Արարատ	97	38	29	9	59
Արմավիր	97	16	9	7	81
Գեղարքունիք	92	33	18	15	59
Լոռի	107	85	50	35	22
Կոտայք	67	20	13	7	47
Շիրակ	119	46	19	27	73
Սյունիք	102	35	13	22	67
Վայոց Ձոր	44	19	13	6	25
Տավուշ	56	24	7	17	32
Երեւան	1	1	1	0	0
Ընդամենը	**896**	**327**	**177**	**150**	**569**

Աղյուսակ՝ 14. Այստեղ ներկայացված են այն համայնքները, որտեղ ձեւավորվել են համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմիններ: Տեղեկության հարցումներին չպատասխանած համայնքների անվանումները աղյուսակում չկան:

Մարզեր եւ մայրաքաղաք	Խորհրդակցական մարմին ձեւավորվել է	Չի ձեւավորվել խորհրդակցական մարմին
Արագածոտն	Ապարան, Զարինջա, Թալին, Ղազարավան, Օշական	Աշտարակ, Դաշտադեմ, Դդմասար, Շենավան, Փարպի
Արարատ	Ազատաշեն, Ազատավան, Այգեզարդ, Այգեստան, Արաքսավան, Արգավանդ, Բաղրամյան, Բյուրավան, Բուրաստան, Դաշտավան, Դարակերտ, Դարբնիկ, Ձորակ, Կանաչուտ, Հայանիստ, Հնաբերդ, Նորաբաց, Նորամարգ, Ուրցաձոր, Ջրաշեն, Վերին Արտաշատ, Վերին Դվին, Վանաշեն, Փոքր Վեդի, ք. Մասիս, Արտաշատ, ք. Վեդի, Քաղցրաշեն	Այգավան, Այնթափ, Արբաթ, Բերքանուշ, Լանջազատ, Մխչյան, Նոր Խարբերդ, Պ. Սեւակ, Տափերական,
Արմավիր	Աղավնատուն, Այգեկ, Այգեւան, Գայ, Դաշտ, Էջմիածին, Լեռնագոգ,	Արագած, Գեղակերտ, Գրիբոյեդով, Լենուղի, Լեռնամերձ, Մայիսյան,

	Խանջյան, Փարաքար	Մյասնիկյան
Գեղարքունիք	Բերդկունք, Գավառ, Գեղամասար, Դդմաշեն, Լանջաղբյուր, Լիճք, Ծովազարդ, Ծովակ, Կարճաղբյուր, Կարմիրգյուղ, Ճամբարակ, գ. Մարտունի, Նորատուս, Շորժա, Ջիլ, Սեւան, Վաղաշեն, Տորֆավան	Աղբերք, Արտանիշ, Գանձակ, Գեղարքունիք, Թթուջուր, Լուսակունք, Ծաղկունք, Մեծ Մասրիկ, ք. Մարտունի, Մաքենիս, Նորակերտ, Շատջրեք, Սեմյոնովկա, Վահան, Վարդենիս
Լոռի	Ագարակ, Ազնվաձոր, Այգեհատ, Անտառաշեն, Արդվի, Արծնի, Արեւաձագ, Արեւաշող, Աքորի, Բազում, Բլագոդարնոյե, Գարգառ, Գեղասար, Գոգարան, Գուգարք, Դարպաս, Դսեղ, Լեռնավան, Լերմոնտովո, Լոռի Բերդ, Կաթնաջուր, Հալավար, Ձյունաշող, Ձորագետ, Ղուրսալ, Ճոճկան, Մեծ Պարնի, Մղարթ, Նավոսելցովո, Շահումյան, Շամլուղ, Շենավան, Շիրակամուտ, Շնող, Ուռուտ, Ուրասար, Պրիվոլնոյե, Ջիլիզա, Սարամեջ, Սարատովկա, Սարչապետ, Սպիտակ, Սվերդլով, Ստեփանավան, Վայհազնաձոր, Վարդաբլուր, Տաշիր, Քարաձոր, Օձուն, Ֆիոլետովո	Ալավերդի, Ախթալա, Ամրակից, Անտառամուտ, Ապավեն, Արջուտ, Բովաձոր, Դաշտադեմ, Եղեգնուտ, Թեղուտ, Թումանյան, Լեռնահովիտ, Լեռնանցք, Լեռնապատ, Լուսաղբյուր, Խնկոյան, Ծաթեր, Ծաղկաբեր, Կաթնաղբյուր, Կաթնառատ, Կարմիր Աղեկ, Կողես, Կուրթան, Հաղպատ, Հոբարձի, Հովնանաձոր, Ձորագյուղ, Ձորամուտ, Նեղոց, Նոր Խաչակապ, Նորաշեն, Չկալով, Սարահարթ, Վանաձոր, Փամբակ
Կոտայք	Աբովյան, Ակունք, Բյուրեղավան, Բջնի, Գետամեջ, Եղվարդ, Ձորավան, Ծաղկաձոր, Նոր Երզնկա, Ջրառատ, Ջրվեժ, Սոլակ, Վերին Պտղնի	Արզական, Կարենիս, Նոր Արտամետ, Նոր Գեղի, Նոր Հաճն, Չարենցավան, Քասախ
Շիրակ	Ամասիա, Արթիկ, Անուշավան, Արեւիկ, Բայանդուր, Գյումրի, Գուսանագյուղ, Երազգավորս, Ձորակերտ, Կապս, Հայրենյաց, Հառիճ, Մարալիկ, Մեղրաշեն, Ողջի, Ջաջուռ, Ջրառատ, Վահրամաբերդ, Տուֆաշեն	Անիպեմզա, Առափի, Արեւշատ, Աղին, Այգաբաց, Աշոցք, Արեգնադեմ, Բագրավան, Բաշգյուղ, Գտաշեն, Իսահակյան, Լուսաղբյուր, Ծաղկուտ, Կամո, Կարմրաքար, Հայկաձոր, Հայկավան, Հարթաշեն, Հովիտ, Ձորաշեն, Մեծ Մանթաշ, Նահապետավան, Շիրակ, Շիրակավան, Սառնաղբյուր, Սարալանջ, Սարատակ
Սյունիք	Աճանան, ք. Ագարակ, Գեղանուշ, Լեռնաձոր, Խնձորեսկ, Կապան, Մեղրի, Նոր Աստղաբերդ, Շաքի, Շիկահող, Շրվենանց, Սիսիան, Վարդանիձոր	Ալվանք, Ախլաթյան, Ակներ, Աղվանի, Առաջաձոր, Արծվանիկ, Գեղի, Դաստակերտ, Իշխանասար, Լիճք, Ձորաստան, Ճակատեն, Նեքին Հանդ, Շվանիձոր, Ուժանիս, Սյունիք, Սեւաքար, Վանեք, Վերիշեն, Տանձավեր, Տավրուս, Օխտար
Վայոց Ձոր	Ագարակաձոր, Աղնջաձոր, Արենի,	Արին, Արփի, Եղեգիս, Ձեղեա,

	Արտաբույնք, Գլաձոր, Ելփին, Եղեգնաձոր, Խաչիկ, Մարտիրոս, Շատին, Ջերմուկ, Ռինդ, Վայք	Սալլի, Վարդահովիտ
Տավուշ	Ակնաղբյուր, Արծվաբերդ, Գանձաքար, Դովեղ, Նոյեմբերյան, Չորաթան, Պառավաքար,	Այգեհովիտ, Այգեձոր, Բերդ, Բերդավան, Գետահովիտ, Դեղձավան, Իծաքար, Լուսահովիտ, Խաշթառակ, Կողբ, Նորաշեն, Ոսկեպար, Չինչին, Պտղավան, Ջուջեւան, Սարիգյուղ, Վազաշեն
Երեւան	Երեւան	























Տարեկան զեկույց. 2016թ



«9. Քանի՞ հանրային լսում կամ քննարկում է կազմակերպվել եւ անցկացվել համայնքում 2014-2015 թվականների ընթացքում:»

Այս բաժնում ամփոփվել են ՀՀ համայնքներում հանրային լսումների համակարգի գործունեության վիճակը: ՀՀ օրենսդրությամբ սահմանված է, որ տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են համայնքի զարգացման ծրագրի եւ տարեկան բյուջեի նախագծերը ավագանու քննարկմանը ներկայացնելուց առաջ դրանք ներկայացնել հանրությանը, լսել համայնքի բնակիչների կարծիքները, առաջարկությունները եւ դիտողությունները, անհրաժեշտության դեպքում, ըստ այդմ այդ նախագծերը վերանայել, ապա միայն ներմուծել ավագանու նիստի օրակարգ: Համայնքապետը իրավունք ունի նաեւ համայնքին վերաբերվող այլ խնդիրների շուրջ նույնպես հանրային լսումներ հրավիրել համայնքում՝ օրենքով սահմանված կարգով բնակիչներին իրազեկելով այդ մասին եւ հրապարակելով քննարկման դրվելիք հնարավոր փաստաթղթերը կամ նախագծերը: Տեղեկության հարցմամբ Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը կամեցել է համայնքապետերից պարզել, թե քանի հանրային լսում է եղել, քանի հոգի է մասնակցել այդ լսումներին, ինչ թեմաներով են եղել դրանք, եւ այլն:

Ամփոփելով 327 համայնքապետերից ստացված տեղեկությունները, պարզվել է, որ այդ համայնքներից միայն 138-ում են 2014-2015 թթ. անցկացվել հանրային լսումներ (15,4%), 189-ում չեն անցկացվել (21,09%), համայնքապետերի 63,5%-ը չի պատասխանել հարցումներին:

Հանրային լսումների անցկացման ցուցանիշներով, առաջատարը Լոռու մարզն է. այս մարզի համայնքների 47,66%-ում հանրային լսումներ այդ երկու տարիների ընթացքում անցկացվել են, բայց համայնքների 31,78%-ում հանրային լսումներ չեն անցկացվել: Ակտիվությամբ Լոռու մարզի համայնքներին հաջորդում է Արարատի մարզը, որի համայնքների 19,59%-ում են անցկացվել հանրային լսումներ, իսկ 19,59%-ում չեն անցկացվել:

Հանրային լսումների կազմակերպման եւ անցկացման ամենացածր ցուցանիշը Արմավիրի եւ Արագածոտնի մարզերում է, համապատասխանաբար՝ համայնքների 2,6 եւ 3,51 տակոսը:

Ըստ 327 համայնքապետերից ստացված պատասխանների, ՀՀ 138 համայնքներում 2014-2015 թվականների ընթացքում համայնքապետարանի նախաձեռնությամբ անցկացվել է ընդհանուր առմամբ, 394 հանրային լսում:

Աղյուսակ՝ 15. Հանրային լսումներ անցկացրած եւ չանցկացրած համայնքների մասին քանակական տեղեկություններ.

Մարզեր եւ մայրաքաղաք	Համայնքների թիվը	Պատաս-խանել է հարցում-ներին	Քանի համայնքում է անցկացվել հանրային լսում 2014-2015 թթ.	Չի անցկաց-վել հանրային լսում	Քանի՞ հանրային լսում է անցկացվել 2014-2015 թթ.	Չի պատասխանել հարցումներին
Արագածոտն	114	10	4	6	12	104
Արարատ	97	38	19	19	78	59
Արմավիր	97	16	2	14	6	81
Գեղարքունիք	92	33	16	17	37	59
Լոռի	107	85	51	34	124	22
Կոտայք	67	20	10	10	33	47
Շիրակ	119	46	13	33	34	73
Սյունիք	102	35	8	27	23	67
Վայոց Ձոր	44	19	8	11	20	25
Տավուշ	56	24	6	18	26	32
Երեւան	1	1	1	0	1	0
Ընդամենը	**896**	**327**	**138**	**189**	**394**	**569**

Աղյուսակ՝ 16. Հանրային լսումներ անցկացրած եւ չանցկացրած համայնքների անվանումները այստեղ են: Տեղեկության հարցումներին չպատասխանած համայնքների անվանումները աղյուսակում չկան:

Մարզեր եւ մայրաքաղաք	Որ համայնքներում են հանրային լսումներ անցկացվել 2014-2015 թթ.	Որ համայնքներում հանրային լսումներ չեն անցկացվել
Արագածոտն	Ապարան, Զարինջա, Թալին, Օշական	Աշտարակ, Դաշտադեմ, Դդմասար, Ղազարավան, Շենավան, Փարպի

Արարատ	Ազատաշեն, Ազատավան, Այգեզարդ, Այգեստան, Արաքսավան, Բաղրամյան, Բուրաստան, Դաշտավան, Դարակերտ, Դարբնիկ, Զորակ, Կանաչուտ, Հայանիտ, Հնաբերդ, Նոր Խարբերդ, Նորամարգ, Ջրաշեն, Փոքր Վեդի, ք. Վեդի	Այգավան, Այնթափ, Արբաթ, Արգավանդ, Բերքանուշ, Բյուրավան, Լանջազատ, Միսչյան, Նորաբաց, Ուրցաձոր, Պ. Սեւակ, Տափերական, ք. Մասիս, Վերին Արտաշատ, Վերին Դվին, Վանաշեն, Քաղցրաշեն, Արտաշատ, Արգավանդ
Արմավիր	Այգեկ, Փարաքար	Աղավնատուն, Այգեվան, Արագած, Գայ, Գեղակերտ, Գրիբոյեդով, Դաշտ, Էջմիածին, Լենուղի, Լեռնագոգ, Լեռնամերձ, Խանջյան, Մայիսյան, Մյասնիկյան
Գեղարքունիք	Բերդկունք, Գանձակ, Գավառ, Գեղարքունիք, Դդմաշեն, Լանջաղբյուր, Լիճք, Ծաղկունք, Ծովազարդ, Կարմիր գյուղ, Ճամբարակ, Նորատուս, Ջիլ, Սեւան, Վարդենիս, Տորֆավան	Աղբերք, Արտանիշ, Գեղամասար, Թթուջուր, Լուսակունք, Ծովակ, Կարճաղբյուր, Մեծ Մասրիկ, գ. Մարտունի, ք. Մարտունի, Մաքենիս, Նորակերտ, Շատջրեք, Շորժա, Սեմյոնովկա, Վահան, Վաղաշեն
Լոռի	Ագարակ, Ազնվաձոր, Այգեհատ, Արդվի, Արծնի, Արեւաձագ, Արեւաշող, Աքորի, Բազում, Բլագոդարնոյե, Գարգառ, Գեղասար, Գոգարան, Գուգարք, Դաշտադեմ, Դսեղ, Թեղուտ, Թումանյան, Լեռնանցք, Լեռնապատ, Լեռնավան, Լերմոնտովո, Լոռի Բերդ, Ծաթեր, Կաթնաջուր, Կարմիր Աղեկ, Հալավար, Ձյունաշող, Ձորագետ, Ղուրսալ, Ճոճկան, Մեծ Պարնի, Մղարթ, Նավոսելցովո, Շահումյան, Շամլուղ, Շենավան, Ուռուտ, Ուրասար, Պրիվոլնոյե, Ջիլիզա, Սարատովկա, Սարչապետ, Սպիտակ, Սվերդլով, Ստեփանավան, Վահագնաձոր, Տաշիր, Քարաձոր, Օձուն, Ֆիոլետովո	Ալավերդի, Ախթալա, Ամրակից, Անտառամուտ, Անտառաշեն, Ապավեն, Արջուտ, Դարպաս, Բովաձոր, Եղեգնուտ, Լեռնահովիտ, Լուսաղբյուր, Խնկոյան, Ծաղկաբեր, Կաթնաղբյուր, Կաթնառատ, Կողես, Կուրթան, Հաղպատ, Հոբարձի, Հովնանաձոր, Ձորագյուղ, Ձորամուտ, Նեղեց, Նոր Խաչակապ, Նորաշեն, Շիրակամուտ, Շնող, Չկալով, Սարահարթ, Սարամեջ, Վանաձոր, Վարդաբլուր, Փամբակ
Կոտայք	Աբովյան, Ակունք, Բյուրեղավան, Բջնի, Գետամեջ, Եղվարդ, Նոր Արտամետ, Չարենցավան, Ջրվեժ, Սոլակ	Արզական, Ձորավան, Ծաղկաձոր, Կարենիս, Նոր Գեղի, Նոր Երզնկա, Նոր Հաճն, Ջրառատ, Վերին Պտղնի, Քասախ
Շիրակ	Ամասիա, Արթիկ, Անուշավան, Արեւիկ, Գյումրի, Գուսանագյուղ, Գտաշեն, Ձորակերտ, Մարալիկ, Շիրակավան, Ողջի, Ջաջուռ, Ջրառատ	Անիպեմզա, Առափի, Արեւշատ, Աղին, Այգաբաց, Աշոցք, Արեգնադեմ, Բագրավան, Բայանդուր, Բաշգյուղ, Երազգավորս, Իսահակյան, Լուսաղբյուր, Ծաղկուտ, Կամո, Կապս, Կարմրաքար,

		Հայկաձոր, Հայկավան, Հայրենյաց, Հառիճ, Հարթաշեն, Հովիտ, Զորաշեն, Մեծ Մանթաշ, Մեղրաշեն, Նահապետավան, Շիրակ, Սառնաղբյուր, Սարալանջ, Սարապատ, Վահրամաբերդ, Տուֆաշեն
Սյունիք	Ակներ, ք. Ագարակ, Լեռնաձոր, Կապան, Մեղրի, Շաքի, Սիսիան, Վարդանիձոր	Ալվանք, Ախլաթյան, Աղվանի, Աճանան, Առաջաձոր, Արծվանիկ, Գեղանուշ, Գեղի, Դաստակերտ, Իշխանասար, Լիճք, Խնձորեսկ, Զորաստան, Ճակատեն, Նեքին Հանդ, Նոր Աստղաբերդ, Շիկահող, Շվանաձոր, Շրվենանց, Ուժանիս, Սյունիք, Սեւաքար, Վանեք, Վերիշեն, Տանձավեր, Տավրուս, Օխտար
Վայոց Ձոր	Ագարակաձոր, Աղնջաձոր, Արտաբույնք, Գլաձոր, Խաչիկ, Մարտիրոս, Ռինդ, Վայք	Արենի, Արին, Արփի, Ելփին, Եղեգիս, Եղեգնաձոր, Ձեղեա, Շատին, Ջերմուկ, Սալլի, Վարդահովիտ
Տավուշ	Արծվաբերդ, Բերդ, Գանձաքար, Դովեղ, Նոյեմբերյան, Ջորաթան	Ակնաղբյուր, Այգեհովիտ, Այգեձոր, Բերդավան, Գետահովիտ, Դեղձավան, Իծաքար, Լուսահովիտ, Խաշթառակ, Կողբ, Նորաշեն, Ոսկեպար, Չինչին, Պառվաքար, Պտղավան, Ջուջեւան, Սարիգյուղ, Վազաշեն
Երեւան	Երեւան	




ԱՐԱԳԱԾՈՏՆ-114 համայնք
Քանի՞ համայնքում է անցկացվել հանրային լսում
ՀԱՄԱՏԵՂ ծրագիր, ԺԱԱ, 2016 թ. զեկույց
2014-2015 թթ. Հանրային լսումներ անցկացրած համայնքների թիվը, 4, 4%
Չի պատասխանել հարցումներին, 104, 91%
Չի անցկացվել հանրային լսում, 6, 5%
ASPAREZ


ԱՐԱՐԱՏ-97 համայնք
Քանի՞ համայնքում է անցկացվել հանրային լսում
ՀԱՄԱՏԵՂ ծրագիր, ԺԱԱ, 2016 թ. զեկույց
2014-2015 թթ. Հանրային լսումներ անցկացրած համայնքների թիվը, 19, 19%
Չի պատասխանել հարցումներին, 59, 61%
Չի անցկացվել հանրային լսում, 19, 20%
ASPAREZ


ԱՐՄԱՎԻՐ-97 համայնք
Քանի՞ համայնքում է անցկացվել հանրային լսում
ՀԱՄԱՏԵՂ ծրագիր, ԺԱԱ, 2016 թ. զեկույց
2014-2015 թթ. Հանրային լսումներ անցկացրած համայնքների թիվը, 2, 2%
Չի պատասխանել հարցումներին, 81, 84%
Չի անցկացվել հանրային լսում, 14, 14%
ASPAREZ


ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-92 համայնք
Քանի՞ համայնքում է անցկացվել հանրային լսում
ՀԱՄԱՏԵՂ ծրագիր, ԺԱԱ, 2016 թ. զեկույց
2014-2015 թթ. Հանրային լսումներ անցկացրած համայնքների թիվը, 16, 17%
Չի պատասխանել հարցումներին, 59, 64%
Չի անցկացվել հանրային լսում, 17, 19%
ASPAREZ


ԼՈՌԻ-107 համայնք
Քանի՞ համայնքում է անցկացվել հանրային լսում
ՀԱՄԱՏԵՂ ծրագիր, ԺԱԱ, 2016 թ. զեկույց
Չի պատասխանել հարցումներին, 22, 20%
2014-2015 թթ. Հանրային լսումներ անցկացրած համայնքների թիվը, 51, 48%
Չի անցկացվել հանրային լսում, 34, 32%
ASPAREZ


ԿՈՏԱՅՔ-67 համայնք
Քանի՞ համայնքում է անցկացվել հանրային լսում
ՀԱՄԱՏԵՂ ծրագիր, ԺԱԱ, 2016 թ. զեկույց
Չի պատասխանել հարցումներին, 47, 70%
2014-2015 թթ. Հանրային լսումներ անցկացրած համայնքների թիվը, 10, 15%
Չի անցկացվել հանրային լսում, 10, 15%
ASPAREZ











Տարեկան զեկույց. 2016թ

2016 թ. տարեկան զեկույցի ներկայացումը մարզերում եւ մայրաքաղաքում

Մինչեւ այս զեկույցի նախնական տարբերակի հրապարակումը, այն, մարզերում համայնքապետերին եւ մարզպետարանի համապատասխան պաշտոնյաներին, իսկ մարզկենտրոններում՝ գործող ԶԼՄ-ներին եւ հասարակական կազմակերպություններին ներկայացնելու համար Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը նամակներ է հղել մարզպետներին, բացատրելով տարեկան զեկույցի՝ համայնքապետերին ներկայացնելու անհրաժեշտությունը եւ կարիքը, խնդրելով աջակցել դահլիճի կամ սրահի տրամադրմամբ, նաեւ՝ հրավիրելով մասնակցել զեկույցի ներկայացմանը: Բոլոր 10 մարզկենտրոններում կազմակերպվել են զեկույցի ներկայացումներ եւ քննարկումներ, որոնց հրավիրվել են համայնքապետերը եւ մարզպետարանի տեղական ինքնակառավարման հարցերով զբաղվող պաշտոնյաները: Համայնքապետերի հետաքրքրությունը տարբեր մարզերում տարբեր մակարդակ է ունեցել: Այդ քննարկումներից հետո, հաշվի առնելով դիտողությունները, վրիպակները, զեկույցը վերանայվել է, լրացվել այդ ընթացքում ստացված տեղեկություններով եւ ստացել վերջնական տեսքը:

Աղյուսակ՝ 17. 2016 թ. տարեկան զեկույցի մարզային եւ երեւանյան ներկայացման եւ քննարկման մասնակցության վիճակագրություն.

	Մարզկենտրոններում հանրային քննարկման վայր	Հրավիրված համայնքա-պետերի թիվը	Միջանկյալ զեկույցի հանրային ներկայաց-ման օրը	Քննարկմանը մասնակցած համայնքա-պետերի կամ ներկայացու-ցիչների թիվը	Քննարկմանը մասնակցած այլ անձանց թիվը
1	Արագածոտն, Աշտարակի քաղաքապետարանի դահլիճ	114	19.10.2016	7	8
2	Արարատ, Արտաշատ, Արարատի մարզպետարանի դահլիճ	97	28.10.2016	9	3
3	Արմավիր, Արմավիրի մարզպետարանի դահլիճ	97	20.10.2016	11	5
4	Գեղարքունիք, Գավառի մարզպետարանի դահլիճ	92	18.10.2016	5	6
5	Լոռի/Վանաձոր, Լոռու մարզպետարանի դահլիճ	107	21.10.2016	22	1
6	Կոտայք, Հրազդան, թիվ 8-րդ Պ.Սեւակի հիմնական դպրոց	67	24.10.2016	9	6
7	Շիրակ, Գյումրի, թիվ 7 դպրոցի դահլիճ	75	27.10.2016	19	9
8	Սյունիք, Կապան, Սյունիքի մարզպետարանի դահլիճ	90	14.10.2016	14	9
9	Վայոց Ձոր, Եղեգնաձոր, Վայոց Ձորի մարզպետարանի դահլիճ	30	13.10.2016	7	7
10	Տավուշ, Իջեւան, Տավուշի մարզպետարանի դահլիճ	41	25.10.2016	5	5

11	Երեւան, Էլիտ Պլազա հյուրանոց, կլոր դահլիճ	7	09.11.2016	2	27
	Ընդամենը	**817**		**110**	**86**

Զեկույցի արձագանքներ եւ լրացումներ մարզպետարաններից

2016 թվականի նոյեմբերի 9-ին Երեւանում տեղի ունեցավ ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից «Տեղական ինքնակառավարման մասին» եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքներով սահմանված թափանցիկության, հանրային հաշվետվողականության եւ մասնակցության ապահովման պարտավորությունների դիտարկման (մոնիտորինգի) այս զեկույցի նախնական ներկայացումը եւ քննարկումը, որին հրավիրված էին ՀՀ բոլոր մարզպետները, ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման փոխնախարարը, ՏԻՄ վարչության պետը, Երեւանի եւ հարակից մարզերի խոշոր համայնքների ղեկավարները, ՀաՄաՏեղ ծրագրի գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչները: Քննարկման ժամանակ, ընդառաջելով մարզպետարանների ներկայացուցիչների առաջարկություններին, որոշվեց մինչեւ զեկույցի հրապարակումը, այն ուղարկել բոլոր մարզպետներին, ՀՀ ՏԿԶՆ պաշտոնյաներին, նրանցից ակնկալելով հնարավոր մեկնաբանություններ եւ դիտարկումներ զեկույցի մասին: Զեկույցին ծանոթանալու եւ ցանկության դեպքում այն մեկնաբանելու խնդրանքով էլեկտրոնային նամակները նրանց են ուղարկվել 2016 թ. նոյեմբերի 14-ին: Պաշտոնյաների եւ նրանց էլեկտրոնային հասցեների ցանկը ներկայացված է այս զեկույցի վերջում՝ թիվ 3 հավելվածում:

Մեկ ամսում ԺԱԱ-ն ստացել է հետեւյալ արձագանքները.

Տավուշի եւ **Արագածոտնի** մարզպետարաններից հայտնել են, որ նամակը եւ զեկույցն ընդունել են ի գիտություն:

Սյունիքի մարզպետարանի ՏԻՄ բաժնի աշխատակիցը հեռախոսազրույցի միջոցով հայտնել է, որ ընդամենը մեկ նկատառում ունեն, այն է. չնայած այս զեկույցում տեղ գտած այն տեղեկություններին, թե մի շարք համայնքներում ավագանին չի ընդունել տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության վերաբերյալ օրենքով սահմանված 3 կարգերը, մարզպետարանի տեղեկություններով, Սյունիքի մարզի բոլոր համայնքներում ավագանիները մինչեւ 2016 թվականի հուլիս ամիսը ընդունել են բոլոր այդ կարգերը:

Արարատ, Գեղարքունիքի եւ **Կոտայքի** մարզպետարաններից նամակներին պատասխան ստանալ չհաջողվել: Հեռախոսազանգերին պատասխանելով, այս մարզպետարանների պաշտոնյաները պատճառաբանել են, որ ԺԱԱ նամակները ուղարկվել են մարզպետների էլեկտրոնային հասցեներին, իսկ այդ փոստարկղերը ոչ ոք չի բացում: Այս պատասխաններից հետո ԺԱԱ իրավախորհրդատուն նույն նամակը եւ զեկույցի նախնական տարբերակը ուղարկել է այդ մարզպետարանների ընդհանուր բաժինների էլեկտրոնային հասցեներին, սակայն մինչեւ զեկույցի այս լրացումները (18 դեկտեմբերի, 2016 թ.) մարզպետարաններից պատասխան չեն տվել: Այս մարզպետարանների ՏԻՄ բաժիններից ԺԱԱ հեռախոսազանգերին կամ չեն պատասխանում, կամ պարբերաբար պատասխանում են, ասելով՝ բաժնի պետը տեղում չէ եւ իրենք էլ տեղյակ չեն, թե երբ կվերադառնա:

Արմավիրի մարզպետարանից ստացվել է պատասխան գրություն, որի համաձայն, մարզպետարանը առաջարկություններ եւ դիտողություններ չունի:

Լոռու մարզպետարանից ստացվել է հետեւյալ պատասխանը, որը մեջբերվում է ամբողջությամբ. «ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից «Տեղական ինքնակառավարման մասին» եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքներով սահմանված թափանցիկության, հանրային հաշվետվողականության եւ մասնակցության ապահովման պարտավորվածությունների դիտարկման (մոնիտորինգի) 2016թ. տարեկան զեկույցում (Աղյուսակ՝ 11, 12) նշվել է, որ Ձեր հարցմանը պատասխանած Լոռու մարզի 85 համայնքներից 29 համայնքների ավագանիների կողմից չեն ընդունվել տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության վերաբերյալ օրենքով սահմանված 3 կարգերը, իսկ Աղյուսակ՝ 13-ում եւ 14-ում նշված է, որ խորհրդակցական մարմիններ չեն ձեւավորել 35 համայնքներ:»

Նամակին կից ներկայացրել են տարեկան զեկույցում նշված համայնքների վերաբերյալ 01.06.2016թ. դրությամբ տվյալները զեկույցի վերջնական տարբերակում ներառելու համար: Այդ աղյուսակը ներկայացվում է այս զեկույցին կից՝ 4-րդ հավելվածում:

Վայոց Ձորի մարզպետարանից ստացվել է պատասխան, որի համաձայն, Վայոց Ձորի մարզի բոլոր համայնքների ավագանիները ընդունել են տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության վերաբերյալ օրենքով սահմանված 3 կարգերը: Կից ներկայացրել են կարգերի հաստատման վերաբերյալ աղյուսակը: Այդ աղյուսակը ներկայացվում է այս զեկույցին կից՝ 5-րդ հավելվածում:

Դատելով Վայոց Ձորի մարզպետարանից ստացված այս տեղեկություններից, մարզի համայնքների ավագանիները ընդունել են հիշյալ կարգերը, ստեղծել են համապատասխան խորհրդակցական մարմինները, կազմակերպել են հանրային լսումներ, սակայն բազմաթիվ համայնքապետեր, ԺԱԱ հարցումներին ի պատասխան, չեն նշել, որ իրենց համայնքների ավագանիները ընդունել են այդ կարգերը:

Շիրակի մարզպետարանի ՏԻՄ բաժնի պետը ԺԱԱ իրավախորհրդատուի հետ զրույցում հայտնել է, որ մինչեւ 2016 թվականի հունիս ամիսը Շիրակի մարզի բոլոր համայնքների ավագանիներն ընդունել են տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության վերաբերյալ օրենքով սահմանված երեք կարգերը: Հատկանշական է, որ Երեւանում 2016 թ. նոյեմբերի 9-ին, մարզպետներին զեկույցի նախնական տարբերակի ներկայացումից հետո Շիրակի մարզպետարանի ՏԻՄ բաժնի ակտիվ աշխատանքի արդյունքում Շիրակի մարզի բոլոր այն համայնքապետերը, ովքեր մինչ այդ չէին տրամադրել տեղեկատվության հարցման պատասխանները, դեկտեմբերի 18-ի դրությամբ տրամադրել են: Մասնավորաբար, մինչեւ 2016 թ. նոյեմբերի 5-ը 79 (մինչեւ 2016 թ. համայնքների խոշորացումը՝ 119) համայնքապետից 46-ն էր պատասխանել հարցումներին, նրանցից միայն 36-ն էր տեղեկացրել, թե այդ կարգերն ընդունվել են իրենց համայնքների ավագանիների որոշումներով:

ՀՀ ՏԿԶ նախարարությունից որեւէ արձագանք՝ զեկույցի նախնական տարբերակին, չի ստացվել:

Իրադրության բարեփոխման առաջարկություններ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ համայնքների ղեկավարների գրեթե 2/3-ը, խախտելով ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը, չի պատասխանել ԺԱԱ տեղեկության հարցումներին, ինչով հնարավորություն չի ընձեռել դիտարկում իրականացնող կազմակերպությանը տեղեկանալ, արդյո՞ք նրանք իրականացնում են թափանցիկության, հանրային հաշվետվողականության եւ հանրային մասնակցության համար «Տեղեկատվության ազատության մասին» եւ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներով նախատեսված սեփական պարտականությունները, իսկ մյուս կողմից այն հանգամանքը, որ տեղեկություններ տրամադրած համայնքների ղեկավարների մի մասը, ըստ իրենց պատասխանների, չի կատարում վերոհիշյալ պարտականությունները, անհետաձգելի ենք համարում առաջարկել.

ՀՀ բոլոր համայնքապետերին.

1. Նորից ծանոթանալ ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» եւ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներով նախատեսված սեփական պարտականություններին, ապա ծանոթացնել դրանց համայնքապետարանների համապատասխան աշխատակիցներին, այդ թվում՝ տեղակալ(ներ)ին, աշխատակազմի քարտուղարին, իսկ առկայության դեպքում՝ հասարակայնության հետ կապերի եւ այլ բաժինների պետերին:
2. Հանձնարարել համապատասխան աշխատակիցներին՝ կատարել «Տեղեկատվության ազատության մասին» եւ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներով նախատեսված՝ հանրային պրոակտիվ իրազեկման, անձանց տեղեկության հարցումներին պատշաճ պատասխանելու պարտականությունները, անհրաժեշտության դեպքում այդ պարտականությունները իրականացնել անձամբ:
3. Նախաձեռնել տեղական ինքնակառավարմանը հանրության մասնակցության ապահովման համար «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված համապատասխան կարգերի նախագծերի մշակման եւ ավագանուն դրանք ներկայացնելու ու ընդունելու գործառույթները, եթե այդպիսիք դեռ չեն ընդունվել:
4. Նախաձեռնել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ստեղծման աշխատանքները, եւ ստեղծել դրանք, եթե այդպիսիք դեռ չեն ձեւավորվել:
5. Նախաձեռնել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ համայնքի զարգացման ծրագրի նախագծի, համայնքի բյուջեի նախագծի եւ այլ խնդիրների շուրջ օրենքով նախատեսված հանրային քննարկումներ կամ լսումներ՝ համապատասխան ընթացակարգերով:
6. Իրականացնել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ հանրային հաշվետվողականության, տեղական ինքնակառավարման հնարավոր առավել թափանցիկության եւ տեղական ինքնակառավարմանը հանրային մասնակցության այլ պարտականությունները, այդ թվում ավագանու գործունեության համար պայմանների ստեղծումը, այդ թվում ավագանու նստավայրի սահմանումը, ավագանու նիստերի մասին պատշաճ նախնական իրազեկումը, ավագանու նիստերի բաց գումարումը,

դրանցում հանրության ներկայության եւ մասնակցության հնարավորությունների ստեղծումը եւ այլն:

7. Ջանքեր ներդնել այս խնդիրների կարգավորման համար համայնքապետարանի համապատասխան աշխատակիցների վերապատրաստման, գիտելիքների հարստացման, եւ իրավակիրառական պրակտիկայի խորացման համար:
8. Համագործակցել ոլորտի փորձագետների եւ քաղաքացիական հասարակության մասնագիտացած կազմակերպությունների հետ՝ վերոհիշյալ ջանքերի իրականացման համար:

ՀՀ Տարածքային կառավարման եւ զարգացման նախարարությանը ու մարզպետարանների համապատասխան վարչությունների ղեկավարներին առաջարկում ենք.

1. Հնարավոր եւ հետեւողական մեթոդական աջակցություն եւ խորհրդատվություն ցուցաբերել համայնքապետերին՝ ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» եւ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներով նախատեսված ՏԻՄ հանրային հաշվետվողականության, թափանցիկության եւ տեղական ինքնակառավարմանը հանրային մասնակցության պարտականությունները պատշաճ կատարելու համար:
2. Համագործակցել ոլորտի փորձագետների եւ քաղաքացիական հասարակության մասնագիտացած կազմակերպությունների հետ՝ վերոհիշյալ ջանքերի իրականացման համար:
3. Օրինական եղանակով խրախուսել այս ոլորտում պարտականությունները պատշաճ կատարող կամ կատարելու համար բարեխիղճ ջանքեր ներդնող համայնքապետերին եւ համայնքապետարաններին:

Տեղական ինքնակառավարման ոլորտի մասնագիտացած կազմակերպություններին եւ փորձագետներին.

1. Ուսուցումների, խորհրդատվության եւ այլ եղանակներով, բոլոր հնարավոր դեպքերում աջակցություն ցուցաբերել տեղական ինքնակառավարման մարմիններին ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» եւ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներով նախատեսված ՏԻՄ հանրային հաշվետվողականության, թափանցիկության եւ տեղական ինքնակառավարմանը հանրային մասնակցության ապահովման պարտականությունները պատշաճ կատարելու համար:

Զանգվածային լրատվամիջոցներին, լրագրողներին.

1. Առավել մեծ ուշադրություն հատկացնել տեղական ինքնակառավարմանը, լուսաբանել այս ոլորտում կառավարման թերությունները, սխալները, կոռուպցիոն ռիսկերը, շահերի բախումները, ինչպես նաեւ ՏԻՄ հանրային հաշվետվողականության, թափանցիկության եւ տեղական ինքնակառավարմանը հանրային մասնակցության վիճակին եւ օրենսդրությամբ նախատեսված պարտականությունների կատարման որակին:

Հետագա աշխատանքների մասին

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» եւ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքներով սահմանված թափանցիկության, հանրային հաշվետվողականության եւ մասնակցության ապահովման պարտավորությունների դիտարկման (մոնիտորինգի) այս զեկույցի նախնական տարբերակը քննարկել է մարզկենտրոններում՝ համայնքապետերի եւ մարզպետարանի համապատասխան բաժինների շահագրգիռ աշխատակիցների հետ, մատնանշելով այն խնդիրները, որոնք հարկավոր է կարգավորել, մասնավորաբար, կատարել վերոհիշյալ օրենքներում առկա ՏԻՄ աշխատանքի թափանցիկության, հաշվետվողականության եւ հանրային մասնակցության պարտավորությունները եւ դրանցից բխած հարակից գործողությունները:

Համայնքապետարանների թափանցիկության այս մոնիտորինգը, դիտողությունների եւ առաջարկությունների հիման վրա կատարելագործվելու եւ առաջիկա տարիներին տարեկան մեկ անգամ իրականացվելու է Հայաստանի բոլոր համայնքներում: Հետագայում եւս տարեկան մեկ անգամ համայնքապետերին, մարզպետարաններին, ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարությանը ու քաղաքացիական հասարակությանն են ներկայացվելու տարեկան զեկույցները:

Հաշվի առնելով մի շարք համայնքապետերի՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված իրենց պարտականությունների նկատմամբ արհամարհանքը, մասնավորաբար հասարակական կազմակերպության տեղեկությունների հարցումների անտեսումը, ինչը վարչական իրավախախտում է, իսկ այս մոնիտորինգի ընթացքում, պարզվեց, որ այդպիսի վարչական իրավախախտումներ կատարեցին ՀՀ 896 համայնքապետերից 569-ը (63,5%) Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը ստիպված է հանրային նշանակության եւ ՀՀ օրենսդրությամբ գաղտնիք չհանդիսացող տեղեկությունները համայնքապետերից ստանալու համար դիմել ՀՀ վարչական դատարան, պահանջելով պարտավորեցնել օրինազանց համայնքապետերին՝ պատասխանել տեղեկություններ հարցումներին, նրանց վարչական պատասխանատվության ենթարկել եւ փոխհատուցել դատական ծախսերը:

Համայնքապետարաններից ստացվող տեղեկությունների մի մասը հրապարակվելու են ակումբի www.publictada.am կայքում՝ համընդհանուր մատչելիության համար:

Եզրափակիչ

Այս զեկույցը կազմել է Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի համապատասխան աշխատակազմը, ծրագրի ղեկավար, ակումբի խորհրդի նախագահ Լեւոն Բարսեղյանի գլխավորությամբ:

Այս զեկույցի մասին բոլոր առաջարկությունները եւ դիտողությունները կարող եք ուղարկել հետեւյալ հասցեներով. Հայաստան, Գյումրի, Պուշկինի փ., 96, կամ levon@asparez.am

Հեռախոսային առաջարկների եւ դիտողությունների համար կարող եք դիմել ծրագրի իրավախորհրդատու Արինա Մեծոյանին, 031250622 հեռախոսահամարով կամ asparezirava ban@gmail.com էլեկտրոնային հասցեով:

20 դեկտեմբերի, 2016 թ.
Հայաստանի Հանրապետություն

Հավելվածներ

Հավելված՝ 1.

Համայնքի ղեկավարներին հղված տեղեկության հարցման օրինակը

_____ համայնքի ղեկավար _____
Հասցե, ՀՀ ____ մարզ, գյուղ _____, _____
Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի իրավաբան, ՀՀ քաղաքացի Արինա Մեծոյանից
Հասցե, Հայաստան, Գյումրի, Պուշկինի փ., 96, հեռախոս 0312 50622

Տեղեկության հարցում 1/2016
05 մարտի, 2016

Հարգելի պարոն _____ ,

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ իրականացվող «ՀաՄաՏեղ»՝ Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը ծրագրի շրջանակներում, շահագրգիռ լինելով տեղական ինքնակառավարման համակարգի աշխատանքի որակի բարելավմամբ, մասնավորաբար, տեղական իշխանությունների գործունեության թափանցիկությամբ եւ հաշվետվողականությամբ, նախաձեռնել է մի ուսումնասիրություն, որն իրականացվում է Հայաստանի բոլոր համայնքներում,եւ որի արդյունքները ամփոփելուց հետո այն կներկայացվի Ձեր ու հանրության ուշադրությանը:

Այս նպատակով, առաջնորդվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով, մենք դիմում ենք ՀՀ բոլոր համայնքների ղեկավարներին, խնդրելով մեզ տրամադրել համայնքապետարանում առկա, չհրապարակված եւ օրենքով գաղտնիք չպարունակող տեղեկությունները, դրանք www.publicdata.am կայքում տեղադրելու, ուսումնասիրելու, վերլուծելու եւ հանրային զեկույց պատրաստելու համար:

Առաջնորդվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով՝ խնդրում եմ ինձ տրամադրել հետեւյալ տեղեկությունները, դրանք ուղարկելով իմ էլեկտրոնային հասցեին.asparezіravaban@gmail.com
Եթե հարցված տեղեկությունների մի մասն ինչ-որ տեղում հրապարակվել է, խնդրում եմ այդ մասով պատասխանի փոխարեն ուղղակի նշել հրապարակման աղբյուրը:

Հաշվի առնելով, որ ներքոհիշյալ հարցվող տեղեկությունները ծավալուն են եւ օրենքով սահմանված 5 օրը բավարար չէ դրանք տրամադրելու համար, ակնկալում եմ այդ տեղեկությունները Ձեզնից ստանալ 30-օրյա ժամկետում՝ ինչպես նախատեսված է օրենքով:

1. Համայնքի ավագանու 2014 եւ 2015 թվականների բոլոր որոշումները,
2. Համայնքի զարգացման քառամյա ծրագիրը (վերջինը, հաստատված համայնքի ավագանու կողմից),
3. Համայնքի 2014 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը,
4. Համայնքի 2015 թվականի ճշտված բյուջեն,
5. 2014 եւ 2015 թվականների համայնքի ղեկավարի բոլոր որոշումները,
6. Համայնքի աշխատակազմի 2015 թվականի հաստատված հաստիքացուցակը,
7. Համայնքի ավագանու կողմից ընդունվե՞լ են արդյոք տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության վերաբերյալ օրենքով սահմանված 3 կարգերը,
8. Համայնքի ղեկավարին կից ձեւավորվե՞լ են արդյոք հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմիններ: Բերեք դրանց անվանումները եւ անդամների թվերը:
9. Քանի՞ հանրային լսումներ կամ քննարկումներեն կազմակերպվել եւ անցկացվել համայնքում 2014-2015 թվականների ընթացքում: Եթե այդպիսիք անցկացվել են, ապա
    - 9.1 Ի՞նչ խնդիրների քննարկման համար են հրավիրվել դրանք,
    - 9.2 Ե՞րբ են տեղի ունեցել դրանք,

9.3 Ի՞նչ եղանակներով է հանրությունը իրազեկվել դրանց մասին,
9.4 Քանի՞ հոգի է մասնակցել դրանցից յուրաքանչյուրին,
9.5 Համայնքի Ավագանուն տրամադրվե՞լ է արդյոք տեղեկատվությունդրանցից յուրաքանչյուրի վերաբերյալ:

10. 2014-2015 թթ. ընթացքում արդյո՞ք հրապարակել եք հետեւյալ տեղեկությունները, որոնց հրապարակումը նախատեսվածէ«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով, եթե այո, ապա որտե՞ղ եւ ե՞րբ.
    14. ՏԻՄ-երի կողմից հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) ծրագրերի, աշխատանքների եւ ծառայությունների մասին, այդ թվում նաեւ համայնքի զարգացման քառամյա ծրագրի մասին.
    15. Համայնքի բյուջեի մասին,
    16. ՏԻՄ-երին հղվելիք գրավոր հարցումների ձեւերը եւ դրանք լրացնելու վերաբերյալ խորհրդատվական ցուցումները,
    17. Համայնքի պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները,
    18. Համայնք աշխատակազմում աշխատանքի ընդունման կարգը եւ թափուր աշխատատեղերը,
    19. Շրջակա միջավայրի վրա համայնքապետարանի ներգործությունը,
    20. Համայնքում հասարակական միջոցառումների ծրագրերը,
    21. Համայնքի ղեկավարի եւ ավագանու անդամների մոտքաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը եւ վայրը,
    22. ՏԻՄ-երի կողմից մատուցվող ծառայությունների բնագավառում գնագոյացման կարգը եւ դրանց վճարների մասին,
    23. Համայնք ղեկավարի կողմից տնօրինվող տեղեկությունների ցանկը եւ դրանց տնօրինման կարգը,
    24. Համայնքի աշխատակազմում ստացված հարցումների եւ դիմումների վերաբերյալ վիճակագրական եւ ամփոփ տվյալները, այդ թվում՝ բավարարված եւ մերժված դիմումներիթիվը եւ մերժման հիմքերը,
    25. Այս հարցման 10.1-10.11 կետերով սահմանված տեղեկությունների մշակման կամ ստացման աղբյուրները,
    26. Այս հարցման 10.1-10.11 կետերով սահմանված տեղեկությունները պարզաբանելու իրավասություն ունեցող անձի տվյալները:

11. Համայնքի աշխատակազմի աշխատակիցների ընդհանուր թիվը 2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ:

12. Համայնքի բյուջեի ընդհանուր գումարը մեկ թվով՝ 2013, 2014 եւ 2015 թվականներին;

13. Համայնքային բոլոր հիմնարկների անվանումները, տնօրենների անուն-ազգանունները, հասցեները եւ աշխատանքային հեռախոսահամարները:

14. Համայնքում գործող քաղաքացիական հասարակության եւ մասնավոր հատվածի բոլոր կազմակերպությունների անվանումները, ղեկավարների անուն-ազգանունները, հասցեները եւ աշխատանքային հեռախոսահամարները:

15. Ի՞նչ համայնքային ծառայություններ է մատուցվում համայնքապետարանը համայնքին, խնդրում եմ համապատասխան նշումներ կատարել ստորեւ բերված աղյուսակում:

N	Համայնքային ծառայության անվանումը	Համայնքում ծառայությունը մատուցվում է, թե ոչ (նշվում է «+», եթե մատուցվում է, իսկ եթե չի մատուցվում նշվում է «-»)	Եթե ծառայությունը մատուցվում է, ապա նշվում է ծառայության դիմաց վճարի չափը կամ սակագինը: Եթե ծառայությունը անվճար ապա նշել «անվճար»:
1.	Ներհամայնքային տրանսպորտ		
2.	Աղբահանում		
3.	Փողոցների մաքրում		
4.	Ջրամատակարարում եւ ջրահեռացում		
5.	Փողոցների լուսավորում		
6.	Առաջնային բժշկական ծառայություն		
7.	Արվեստի, գեղարվեստի դպրոցներ		
8.	Մարզադպրոց		
9.	Երիտասարդական կենտրոն		
10.	Թանգարան, ցուցասրահ		
11.	Մշակույթի տուն, ակումբներ, կենտրոններ		
12.	Գրադարաններ		
13.	Նախադպրոցական կրթության ծառայություն		
14.	Տարրական ընդհանուր կրթության ծառայություն		
15.	Հիմնական միջնակարգ կրթությանծառայություն		
16.	Երաժշտական դպրոց		
17.	Արտադպրոցական դաստիարակության ծառայություն		
18.	Սոցիալական ապահովության ծառայություն (ընտանեկան նպաստներ)		
19.	Սոցիալական օգնության տրամադրում		

Հավելված՝ 2

Հայաստանի Հանրապետության օրենքը «Տեղեկատվության ազատության մասին»
Ոչպաշտոնական քաղվածք

Ընդունել է ԱԺ-ն 2003թ. սեպտեմբերի 23-ին

Հոդված 1. Սույն օրենքի կարգավորման առարկան եւ գործողության ոլորտը

1. Սույն օրենքը կարգավորում է տեղեկատվության ազատության հետ կապված հարաբերությունները, սահմանում է տեղեկատվության ապահովման բնագավառում տեղեկատվություն տնօրինողների իրավասությունը, ինչպես նաեւ տեղեկություններ ստանալու կարգը, ձեւերը եւ պայմանները:

2. Սույն օրենքի գործողությունը տարածվում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների եւ դրանց պաշտոնատար անձանց վրա£

Հոդված 2. Տեղեկատվության ազատության մասին օրենսդրությունը

1. Տեղեկատվության ազատության մասին օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, սույն օրենքից եւ իրավական այլ ակտերից:

2. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը£

Հոդված 3. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվում են հետեւյալ հիմնական հասկացությունները.

տեղեկատվության ազատություն՝ տեղեկությունն օրենսդրությամբ սահմանված կարգով փնտրելու եւ դա տեղեկատվություն տնօրինողից ստանալու իրավունքի իրականացում.

Տեղեկություն՝ անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երեւույթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված եւ ձեւավորված տվյալներ՝ անկախ դրանց տնօրինման ձեւից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ.

տեղեկատվություն տնօրինող՝ տեղեկություններ ունեցող պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններ, պետական հիմնարկներ, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություններ, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպություններ եւ դրանց պաշտոնատար անձինք.

հանրային նշանակության կազմակերպություն՝ ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող, ինչպես նաեւ առողջապահության, սպորտի, կրթության, մշակույթի, սոցիալական ապահովության, տրանսպորտի եւ կապի, կոմունալ ոլորտներում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպություններ.

Հարցում՝ տեղեկություն փնտրելու եւ (կամ) դա ստանալու նպատակով սույն օրենքով սահմանված կարգով տեղեկատվություն տնօրինողին ուղղված գրավոր կամ բանավոր դիմում.

Հրապարակում՝ տեղեկությունը մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցներով, համաշխարհային համակարգչային ցանցով (այնուհետեւ՝ Ինտերնետ), ինչպես նաեւ օրենսդրությամբ սահմանված այլ միջոցներով հանրությանը տեղեկացնել եւ մատչելի դարձնել:

Հոդված 4. Տեղեկատվության ազատության ապահովման հիմնական սկզբունքները

Տեղեկատվության ազատության ապահովման հիմնական սկզբունքներն են՝

1) տեղեկությունների գրանցման, դասակարգման եւ պահպանման միասնական կարգի սահմանումը.

2) տեղեկություններ փնտրելու եւ ստանալու ազատության պաշտպանությունը.

3) տեղեկությունների տրամադրման մատչելիության ապահովումը.

4) հրապարակայնությունը:

Հոդված 5. Տեղեկատությունների գրանցումը, դասակարգումը եւ պահպանումը

Տեղեկատվության տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցումը, դասակարգումը եւ պահպանումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Հոդված 6. Տեղեկատվության ազատության իրականացումը

1. Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր կողմից փնտրվող տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցումով դիմել տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալ այդ տեղեկությունը:
2. Օտարերկրյա անձինք սույն օրենքով նախատեսված իրավունքներից եւ ազատություններից կարող են օգտվել միայն Հայաստանի Հանրապետության օրենքով եւ (կամ) միջազգային պայմանագրով սահմանված դեպքերում:
3. Տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքով նախատեսված դեպքերում:

Հոդված 7. Տեղեկությունների մատչելիության եւ հրապարակայնության ապահովումը

1. Տեղեկատվություն տնօրինողն օրենսդրությամբ սահմանված կարգով մշակում եւ հրապարակում է իր կողմից տեղեկություն տալու կարգը, որը փակցնում է իր գտնվելու վայրումª բոլորի համար տեսանելի տեղումՀ
2. Տեղեկատվություն տնօրինողն անհապաղ հրապարակում կամ այլ մատչելի ձեւով հանրությանը տեղեկացնում է իր տնօրինության տակ գտնվող այն տեղեկությունը, որի հրապարակումը կարող է կանխել պետական եւ հասարակական անվտանգությունը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին եւ ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանը սպառնացող վտանգը:
3. Եթե Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ (կամ) օրենքով այլ բան նախատեսված չէ, ապա տեղեկատվություն տնօրինողը տարին առնվազն մեկ անգամ հրապարակում է իր գործունեությանն առնչվող հետեւյալ տեղեկությունները եւ դրանցում կատարված փոփոխությունները.

1) հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) աշխատանքները եւ ծառայությունները.
2) բյուջեն.
3) գրավոր հարցումների ձեւերը եւ դրանք լրացնելու վերաբերյալ խորհրդատվական ցուցումները.
4) հաստիքացուցակները, ինչպես նաեւ պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները.
5) աշխատանքի ընդունման կարգը եւ թափուր աշխատատեղերը.
6) շրջակա միջավայրի վրա ներգործությունը.
7) հասարակական միջոցառումների ծրագրերը.
8) քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը եւ վայրը.
9) աշխատանքների եւ ծառայությունների բնագավառում գնագոյացման կարգը, գները (սակագները).
10) տնօրինվող տեղեկությունների ցանկը եւ դրանց տնօրինման կարգը.
11) ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական եւ ամփոփ տվյալները, այդ թվումª մերժման հիմքերը.
12) սույն մասում սահմանված տեղեկությունների մշակման կամ ստացման աղբյուրները.
13) սույն մասում սահմանված տեղեկությունները պարզաբանելու իրավասություն ունեցող անձի տվյալները

4. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված տեղեկություններում կատարված փոփոխությունները հրապարակվում են դրանք կատարվելուց հետոª 10-օրյա ժամկետում:
5. Սույն հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերում նշված տեղեկությունները հրապարակվում են հանրության համար մատչելի ձեւով, իսկ տեղեկատվություն տնօրինողի ինտերնետային էջի առկայության դեպքում նաեւ դրանով:
6. Հանրային նշանակության, ինչպես նաեւ բյուջեից հատկացում (ֆինանսավորում) ստացող կազմակերպությունները կարող են չհրապարակել սույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 4-րդ եւ 5-րդ
կետերում սահմանված տեղեկությունները եւ դրանց փոփոխությունները:

Հոդված 8. Տեղեկատվության ազատության սահմանափակումները

1. Տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա՝

1) պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առեւտրային գաղտնիք.
2) խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը.

3) պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները.

4) բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք).

5) խախտում է հեղինակային իրավունքը եւ (կամ) հարակից իրավունքները:

2. Եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ:

3. Տեղեկության տրամադրումը չի կարող մերժվել, եթե՝

1) դա վերաբերում է քաղաքացիների անվտանգությանը եւ առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին, ինչպես նաեւ տարերային (ներառյալª պաշտոնապես կանխատեսվող) աղետներին եւ դրանց հետեւանքներին.

2) դա ներկայացնում է Հայաստանի Հանրապետության տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաեւ բնության եւ շրջակա միջավայրի պաշտպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, առեւտրի, մշակույթի բնագավառում տիրող իրական վիճակը.

3) դրա չտրամադրումը բացասական ազդեցություն կունենա Հայատանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական եւ հոգեւոր-մշակութային զարգացման պետական ծրագրերի իրականացման վրա:

Հոդված 9. Հարցումը ներկայացնելու եւ քննարկելու կարգը

1. Գրավոր հարցումում նշվում է դիմողի անունը, ազգանունը, քաղաքացիությունը, բնակության, աշխատանքի կամ ուսումնական հաստատության գտնվելու վայրը եւ այն պետք է լինի ստորագրված (իրավաբանական անձի դեպքումª դրա անվանումը, գտնվելու վայրը):

2. Գրավոր հարցումների գործավարությունն իրականացվում է քաղաքացիների դիմումների եւ բողոքների համար օրենսդրությամբ սահմանված կարգովª գործավարության մյուս ձեւերից առանձին:

3. Գրավոր հարցումներին պատասխան չի տրվում, եթե՝

1). դա չի պարունակում սույն հոդվածի 1-ին մասում նշված բոլոր տվյալները.

2) պարզվում է, որ դրա հեղինակի ինքնությանը վերաբերող տվյալները կեղծ են.

3) դա նույն անձի կողմից նույն տեղեկությունը ստանալու պահանջով վերջին 6 ամսվա ընթացքում ներկայացված երկրորդ դիմումն է, բացառությամբ սույն օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքի:

4. Դիմողը պարտավոր չէ հիմնավորել հարցումը:

5. Բանավոր հարցմամբ դիմողը պարտավոր է նախապես հայտնել իր անունը եւ ազգանունը£ Բանավոր հարցման պատասխանը տրվում է, եթե՝

1) պահանջվող տեղեկության տրամադրումը կարող է կանխել պետական հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին եւ ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանը սպառնացող վտանգը.

2) անհրաժեշտ է ճշտել տվյալ տեղեկատվությունը տնօրինողի մոտ համապատասխան տեղեկության առկայության փաստը.

3) անհրաժեշտ է պարզաբանել տվյալ տեղեկատվությունը տնօրինող կողմից գրավոր հարցումների քննարկման կարգը£

6. Բանավոր հարցումի պատասխանը տրվում է բանավոր՝ հարցումը լսելուց հետո անհապաղ կամ հնարավորինս սեղմ ժամկետում: Եթե բանավոր հարցմամբ դիմողը չի հայտնում իր անունը եւ ազգանունը եւ (կամ) բանավոր հարցումը չի համապատասխանում սույն հոդվածի 5-րդ մասի 1-ին, 2-րդ եւ 3 -րդ կետերով սահմանված պահանջներին, ապա տեղեկատվություն տնօրինողը կարող է չպատասխանել բանավոր հարցումին:

7. Գրավոր հարցման պատասխանը տրվում է հետեւյալ ժամկետներում.

1) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.

2) եթե գրավոր դիմումում նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի եւ ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում հարցումը ստանալուց հետոª 5-օրյա ժամկետում.

3) եթե հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո 30-օրյա ժամկետում,

որի մասին հարցումն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

8. Գրավոր հարցումի պատասխանը տրվում է այդ հարցումում նշված նյութական կրիչով: Եթե նյութական կրիչը նշված չէ, եւ դա անհնար է պարզել տվյալ հարցմանը պատասխանելու համար սույն օրենքով սահմանված ժամկետում, ապա գրավոր հարցման պատասխանը տրվում է տեղեկությունը տնօրինողին առավել ընդունելի նյութական կրիչով:

9. Սույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետով նախատեսված դեպքում հարցմամբ դիմողն իր ցանկությամբ կարող է օրենսդրությամբ սահմանված կարգով տեղում ծանոթանալ տեղեկությանըª հետ վերցնելով իր գրավոր հարցումը:

10. Եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը, կամ դրա տրամադրումը իր լիազորությունների շրջանակից դուրս է, ապա նա տվյալ գրավոր հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին, իսկ հնարավորության դեպքում նրան տրամադրել նաեւ այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությունը:

11. Եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությանը վերաբերող բոլոր տվյալները, ապա նա գրավոր հարցմամբ դիմողին է տալիս տվյալների այն մասը, որն ունի, իսկ հնարավորության դեպքում գրավոր հարցումի պատասխանում նշում է նաեւ այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվումª արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկատվությանը վերաբերող մյուս տվյալները:

Հոդված 10. Տեղեկությունների տրամադրման պայմանները

1. Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների եւ կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենը) տրամադրումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված տեղեկության տրամադրման համար գանձում չի կատարվում հետեւյալ դեպքերում.

1) բանավոր հարցումներին պատասխանելիս.

2) մինչեւ 10 էջ տպագրված կամ պատճենահանված տեղեկություն տրամադրելիս.

3) տեղեկությունն էլեկտրոնային փոստով (ինտերնետային ցանցով) տրամադրելիս.

4) սույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասում նշված տեղեկությունների տրամադրման մասին գրավոր հարցումներին պատասխանելիս.

5) սույն օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետով եւ 9-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված դեպքերում տեղեկության տրամադրման ժամկետի փոփոխման մասին տեղեկություններ տրամադրելիս.

6) տեղեկության տրամադրումը մերժելիս:

3. Հանրային նշանակության կազմակերպություններն ինքնուրույն են որոշում տեղեկությունների տրամադրման համար գանձվող գումարի չափը, որը չի կարող գերազանցել այդ տեղեկության տրամադրման ծախսերը:

4. Ոչ հավաստի կամ ոչ լրիվ տվյալներ պարունակող տեղեկություն տրամադրած մարմինը կամ կազմակերպությունն այդ տեղեկությունը ստացած անձի գրավոր հարցման հիման վրա պարտավոր է սույն օրենքով սահմանված կարգով անվճար տրամադրել ճշգրտված տվյալներով տեղեկություն:

Հոդված 11. Տեղեկության տրամադրումը մերժելու հիմքերը եւ կարգը

1. Տեղեկության տրամադրումը մերժվում է սույն օրենքի 8-րդ հոդվածում սահմանված դեպքերում կամ այդ տեղեկության տրամադրման համար սահմանված գումարը չվճարվելու դեպքում:

2. Տեղեկատվություն տնօրինողը կարող է չպատասխանել բանավոր հարցումին, եթե տվյալ պահին դա խոչընդոտում է տեղեկատվություն տնօրինողի հիմնական պարտականությունների կատարմանը, բացառությամբ սույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի£

3. Գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում տեղեկետվություն տնօրինողն այդ մասին 5-օրյա ժամեկտում գրավոր հայտնում է դիմողինª նշելով մերժման հիմքը (օրենքի համապատասխան նորմը), ինչպես նաեւ դրա բողոքարկման կարգը£

4. Տեղեկության տրամադրման մերժումը կարող է բողոքարկվել լիազորված պետական կառավարման մարմին կամ դատարան:

Հոդված 12. Տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողների պարտականաությունները

Տեղեկատվության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝

1) ապահովել տեղեկությունների մատչելիությունը եւ հրապարակայնությունը .

2) իրականացնել իր տնօրինության տակ գտնվող տեղեկությունների գրանցումը, դասակարգումը եւ պահպանումը.

3) տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավաստի եւ իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն.

4) սահմանել իր կողմից բանավոր եւ ¥կամ¤ գրավոր տեղեկությունների տրամադրման կարգը.

5) նշանակել տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձին£

Հոդված 13. Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձը

1. Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձը կարող է լինել տեղեկատվություն տնօրինողի նշանակած պաշտոնատար անձը կամ տեղեկատվություն տնօրինողի ղեկավարը:

2. Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձն օրենսդրությամբ սահմանված կարգով՝

1) ապահովում է տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողի պարտականությունների իրականացումը:

2) տեղեկություն փնտրողին մատչելի ձեւով բացատրում է տեղեկության տրամադրման կարգը, պայմանները եւ ձեւերը:

3) մշակում է ստացված հարցումների վիճակագրական եւ ամփոփ տվյալները:

Հոդված 14. Պատասխանատվությունը տեղեկատվության ազատության խախտման համար

1. Բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, տեղեկություն տրամադրելուց հրաժարվելու կամ ոչ հավաստի տեղեկություն տրամադրելու, ինչպես նաեւ սույն օրենքով սահմանված կարգի այլ խախտումներն առաջացնում են օրենքով սահմանված պատասխանատվություն:

2. Սույն օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում տեղեկության հրապարակումը չի կարող առաջացնել վարչական կամ քրեական պատասխանատվություն:

Հոդված 15. Օրենքի ուժի մեջ մտնելը

1.Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից:

2. Սույն օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերն ուժի մեջ են մտնում 2004 թվականի հունվարի 1-ից:

Հավելված՝ 3

ՀՀ մարզպետների եւ ՏԿԶՆ պաշտոնյաների անվանացանկը, որոնց Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը ուղարկել է զեկույցի նախնական տարբերակին արձագանքելու խնդրանքով նամակները:

ՀՀ մարզպետները.

մարզ	մարզպետ	էլեկտրոնային հասցե	հեռախոսա-համար
Արագածոտն	Գաբրիել Գյոզալյան	marzpet.aragatsotn@mta.gov.am	+374 23 232 251
Արարատ	Ռուբիկ Աբրահամյան	marzpet.ararat@mta.gov.am	+374 23 525 216 +374 10 286 023
Արմավիր	Աշոտ Ղահրամանյան	marzpet.armavir@mta.gov.am	+374 10 280 646
Գեղարքունիք	Ռաֆիկ Գրիգորյան	marzpet.gegharquniq@mta.gov.am	+374 26 421 045
Լոռի	Արթուր Նալբանդյան	marzpet.lori@mta.gov.am lori@mta.gov.am	+ 374 32 246 192
Կոտայք	Կարապետ Գուլոյան	marzpet.kotayq@mta.gov.am	+374 22 323 663
Շիրակ	Հովսեփ Սիմոնյան	shirak@mta.gov.am	+374 31 232 610
Սյունիք	Վահե Հակոբյան	syunik@mta.gov.am	+374 10 287 822
Տավուշ	Հովիկ Աբովյան	marzpet.tavush@mta.gov.am	+374 26 340 045
Վայոց Ձոր	Հարություն Սարգսյան	marzpet.vayotsdzor@mta.gov.am	+374 28 122 522

ՀՀ ՏԿԶ նախարարության պաշտոնյաներ.

ՀՀ ՏԿԶՆ պաշտոնյա	էլեկտրոնային հասցե	հեռախոսա-համար
ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման փոխնախարար Վաչե Տերտերյան	v.terteryan@mta.gov.am	+374 10 511 303
ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարության տեղական ինքնակառավարման վարչության պետ Աշոտ Գիլոյան	a.giloyan@mta.gov.am	+374 10 511 342

Հավելված՝ 4

ՀՀ Լոռու մարզի մի շարք համայնքներում տեղական ինքնակառավարմանը հանրային մասնակցության մասին ավագանու կողմից օրենքով նախատեսված կարգերի հաստատման վերաբերյալ տեղեկատվությունը 01.06.2016թ. դրությամբ: Ստացվել է Լոռու մարզպետարանից:

NN	Համայնք	Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման եւ գործունեության կարգը հաստատելու օրը. ամիսը, տարին	Համայնքում հանրային բաց լսումների եվ (կամ) քննարկումների կազմակերպման եւ անցկացման կարգը հաստատելու օրը, ամիսը, տարին	Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու օրը, ամիսը, տարին	Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման մասին ավագանու ընդունած որոշման համարը, օրը, ամիսը, տարին
1	Վանաձոր	09.10.2013	09.10.2013թ.	15.03.2016	N 76-Ա, 09.10.2013
2	Անտառամուտ	13.11.2013	13.11.2013	08.12.2014	N 23-Ա, 08.12.2014
3	Անտառաշեն	19.11.2013	19.11.2013	26.11.2014	N 21-Ա, 26.11.2014
4	Արջուտ	05.11.2013	05.11.2013	27.11.2014	N 25-Ա, 27.11.2014
5	Դարպաս	26.11.2013	26.11.2013	28.11.2014	N 28-Ա, 28.11.2014
6	Եղեգնուտ	04.11.2013	04.11.2013	24.11.2014	N 26-Ա, 24.11.2014
7	Լեռնապատ	26.11.2013	17.12.2013	21.11.2014	N 46-Ա, 21.11.2014
8	Ձորագյուղ	12.12.2013	12.12.2013	26.11.204	N 12-Ա, 26.11.2014
9	Փամբակ	12.11.2013	12.11.2013	10.11.2014	N 17-Ա, 10.11.2014
10	Ամրակից	15.11.2013	15.11.2013	15.11.2014	N 20-Ա, 15.11.2014
11	Բովաձոր	25.11.2013	25.11.2013	12.12.2014	N 16-Ա, 25.11.2013
12	Կաթնաղբյուր	08.11.2013	08.11.2013	03.05.2016	N 33-Ա, 08.11.2013
13	Կողես	04.11.2013	04.11.2013	16.05.2016	N 28-Ա, 04.11.2013
14	Կուրթան	12.11.2013	12.11.2013	28.10.2014	N 45-Ա, 17.11.2014
15	Հոբարձի	25.11.2013	25.11.2013	20.11.2014	N 27-Ա, 25.11.2013
16	Հովնանաձոր	09.12.2013	09.12.2013	15.05.2016	N 18-Ա, 01.12.2014
17	Ալավերդի	30.10.2013	30.10.2013	25.12.2014	N 63-Ա, 25.12.2014
18	Ախթալա	19.11.2013	19.11.2013	13.10.2014	N 42-Ա, 11.12.2014
19	Թումանյան	05.12.2013	05.12.2013	06.11.2014	N 46-Ա, 06.11.2014
20	Թեղուտ	06.11.2013	06.11.2013	26.11.2014	N 25-Ա, 26.11.2014
21	Ծաթեր	28.11.2013	28.11.2013	28.11.2014	N 25-Ա, 28.11.2014
22	Կարմիր Աղեկ	11.11.2013	11.11.2013	27.11.2014	N 20-Ա, 27.11.2014
23	Հաղպատ	15.11.2013	15.11.2013	28.11.2014	N 33-Ա, 28.11.2014
24	Նեղոց	29.11.2013	25.11.2013	08.12.2014	N 30-Ա, 08.12.2014
25	Չկալով	14.11.2013	14.11.2013	15.12.2014	N 21-Ա, 15.12.2014
26	Ապավեն	04.11.2013	04.11.2013	20.11.2014	N 21-Ա, 20.11.2014
27	Դաշտադեմ	07.11.2013	07.11.2013	24.11.2014	N 24-Ա, 24.11.2014
28	Լեռնահովիտ	08.11.2013	08.11.2013	05.11.2014	N 18-Ա, 05.11.2014
29	Կաթնառատ	06.11.2013	06.11.2013	10.11.2014	N 19-Ա, 10.11.2014
30	Ձորամուտ	04.11.2013	04.11.2013	05.11.2014	N 31-Ա, 17.11.2014
31	Նորաշեն	25.11.2013	25.11.2013	21.11.2014	N 19-Ա, 21.11.2014
32	Լեռնանցք	06.12.2013	06.12.2013	24.11.2014	N 20-Ա,24.11.2014
33	Լուսաղբյուր	11.11.2013	11.11.2013	01.12.2014	N 18-Ա,01.12.2014
34	Խնկոյան	11.11.2013	11.11.2013	01.12.2014	N 17-Ա,01.12.2014
35	Ծաղկաբեր	29.11.2013	29.11.2013	23.10.2014	N 23-Ա,28.11.2014
36	Նոր Խաչակապ	15.11.2013	15.11.2013	28.11.2014	N 17-Ա,28.11.2014
37	Սարահարթ	20.11.2013	20.11.2013	21.07.2014	N 17-Ա,24.11.2014

Հավելված՝ 5

ՀՀ Վայոց Ձորի մարզի մի շարք համայնքներում տեղական ինքնակառավարմանը հանրային մասնակցության մասին ավագանու կողմից օրենքով նախատեսված կարգերի հաստատման վերաբերյալ տեղեկատվությունը 01.06.2016թ. դրությամբ: Ստացվել է Վայոց Ձորի մարզպետարանից:

ՀՀ Վայոց ձորի մարզ-Կարգերի հաստատման վերաբերյալ տեղեկատվություն

NN	Համայնք	Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման եվ գործունեության կարգը հաստատելու օրը	Համայնքում հանրային բաց լսումների եվ (կամ) քննարկումների կազմակերպման եվ անցկացման կարգը հաստատելու օրը	Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու օրը
1	Եղեգնաձոր	21.08.2015թ.	21.08.2015թ.	21.08.2015թ.
2	Վայք	19.08.2015թ.	19.08.2015թ.	19.08.2015թ.
3	Ջերմուկ	15.10.2015թ.	15.10.2015թ.	15.10.2015թ.
4	Ագարակաձոր	15.04.2016թ.	15.04.2016թ.	15.04.2016թ.
5	Ազատեկ	25.03.2016թ.	25.03.2016թ.	25.03.2016թ.
6	Աղավնաձոր	20.11.2015թ.	20.11.2015թ.	20.11.2015թ.
7	Աղնջաձոր	22.01.2015թ.	22.01.2015թ.	22.01.2015թ.
8	Արենի	30.11.2014թ.	30.11.2014թ.	30.11.2014թ.
9	Արին	29.03.2016թ.	29.03.2016թ.	29.03.2016թ.
10	Արտաբույնք	04.03.2015թ.	04.03.2015թ.	04.03.2015թ.
11	Արտավան	01.04.2016թ.	01.04.2016թ.	01.04.2016թ.
12	Արփի	29.02.2016թ.	29.02.2016թ.	29.02.2016թ.
13	Բարձրունի	27.10.2015թ.	27.10.2015թ.	27.10.2015թ.
14	Գետափ	11.03.2016թ.	11.03.2016թ.	11.03.2016թ.
15	Գլաձոր	08.04.2016թ.	08.04.2016թ.	08.04.2016թ.
16	Գնդեվազ	14.04.2016թ.	14.04.2016թ.	14.04.2016թ.
17	Գնիշիկ	01.12.2015թ.	01.12.2015թ.	01.12.2015թ.
18	Գոմք	05.12.2014թ.	05.12.2014թ.	05.12.2014թ.
19	Գողթանիկ	03.03.2016թ.	03.03.2016թ.	03.03.2016թ.
20	Ելփին	28.07.2015թ.	28.07.2015թ.	28.07.2015թ.
21	Եղեգիս	21.03.2016թ.	21.03.2016թ.	21.03.2016թ.
22	Զառիթափ	17.03.2016թ.	17.03.2016թ.	17.03.2016թ.
23	Զեդեա	16.07.2014թ.	16.05.2014թ.	16.05.2014թ.
24	Թառաթումբ	05.03.2016թ.	05.03.2016թ.	05.03.2016թ.
25	Խաչիկ	29.07.2015թ.	29.07.2015թ.	29.07.2015թ.
26	Խնձորուտ	15.12.2014թ.	15.12.2014թ.	15.12.2014թ.
27	Կարմրաշեն	06.04.2016թ.	06.04.2016թ.	06.04.2016թ.
28	Հերհեր	07.07.2015թ.	22.03.2016թ.	07.07.2015թ.
29	Հերմոն	29.03.2016թ.	29.03.2016թ.	29.03.2016թ.
30	Հորբատեղ	12.04.2016թ.	12.04.2016թ.	12.04.2016թ.
31	Հորս	08.04.2016թ.	08.04.2016թ.	08.04.2016թ.
32	Մալիշկա	01.03.2016թ.	01.03.2016թ.	01.03.2016թ.
33	Մարտիրոս	28.02.2015թ.	28.02.2015թ.	28.02.2015թ.
34	Նոր Ազնաբերդ	16.03.2016թ.	16.03.2016թ.	16.03.2016թ.
35	Շատին	16.09.2014թ.	16.09.2014թ.	16.09.2014թ.
36	Չիվա	08.04.2016թ.	08.04.2016թ.	08.04.2016թ.
37	Ռինդ	16.01.2015թ.	16.01.2015թ.	16.01.2015թ.
38	Սայլի	08.04.2016թ.	08.04.2016թ.	08.04.2016թ.
39	Սարավան	02.04.2016թ.	02.04.2016թ.	02.04.2016թ.
40	Սերս	11.04.2016թ.	11.04.2016թ.	11.04.2016թ.
41	Վարդահովիտ	02.04.2016թ.	02.04.2016թ.	02.04.2016թ.
42	Վերնաշեն	12.04.2016թ.	12.04.2016թ.	12.04.2016թ.
43	Փոռ	02.03.2016թ.	02.03.2016թ.	02.03.2016թ.
44	Քարագլուխ	04.04.2016թ.	04.04.2016թ.	04.04.2016թ.